

Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բադրակ

**Պահեստագորային
համակարգի
կիրառման փորձի
հետազոտություն**

Ժնև-Երևան, 2016

ISBN 978-617-7533-06-0

Պահեստազորային համակարգի կիրառման փորձի հետազոտություն. –

Центр досліджень армії, конверсії та роззброєння, 2016. – 52 էջ.

Խմբագիր՝ Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բադրակ

The publication of this book has been funded by the Directorate for Security Policy (SIPOL) –
Swiss Federal Department of Defense, Civil Protection and Sports

Նախաբան

Զինված ուժերի պահեստազորային հնարավորությունների արդյունավետ կիրառումը, կազմակերպված պահեստազորային համակարգի ձևավորումը և այս ոլորտում թիրախավորված պետական քաղաքականության իրականացումը ռազմական անվտանգության ապահովման հրամայական է: Պահեստազորը, լինելով զինված ուժերի բաղադրիչ, պետք է ունենա համարժեք պատրաստականություն՝ զինված ուժերի հետ անհրաժեշտ ինտեգրումն ու ռազմական սպառնալիքներին համարժեք արձագանքումն ապահովելու համար:

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկի կենտրոնի տվյալ ուսումնասիրությունը ընդգրկում է մի շարք պետությունների պահեստազորային համակարգերի կազմակերպման լավագույն փորձը: Դիտարկելով պահեստազորի կազմակերպման միջազգային ինչպես հաջողված փորձերը, այնպես էլ թերությունները, առանձին կառուցակարգեր կարող են հետաքրքրություն ներկայացնել ՀՀ զինված ուժերի պահեստազորային համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացման գործում:

Սույն սումմասիրությունն իրականացվել է ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի և Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկի կենտրոնի համագործակցության շրջանակներում:

Կորյուն Նահապետյան,

ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ

Նախաբան

Արդյունավետ պահեստազորային համակարգի կազմակերպումը, այդ թվում՝ մարտական պատրաստականության ու համապատասխան տեխնիկայի ապահովումը, պետության պաշտպանական քաղաքականության հնարավոր բաղադրիչներից է:

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության (ԶՈՒԺՎ) ժնկի կենտրոնի սույն ուսումնասիրությունը անդրադառնում է պահեստազորային համակարգի կազմակերպման մի շարք ժամանակակից ձևերին: Չնայած այս ձևերից յուրաքանչյուրը պետք է դիտարկել առանձին և հասկանալ դրանց առանձնահատկությունները, դրանցից կարելի է որոշակի դասեր քաղել:

Ֆիլիպ Ֆլուրի,

Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկի կենտրոնի տնօրենի տեղակալ, Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար

Ներածություն

Պատերազմների հազարամյա պատմության փորձը հստակորեն ցույց է տվել, որ խաղաղ ժամանակների համար նախատեսված բանակը հատկապես երկարատև մարտական գործողությունների ժամանակ, իրոք, հաղթող չի լինում: Մեծաքանակ մշտական բանակը բյուջեի համար չափազանց մեծ շռայլություն է: Այսպես, նույնիսկ վաղ ժամանակների տիրակալներն իրենց զինված ուժերը ձևավորում էին զինակոչի տարիքի հպատակներից և հետագայում տերության ներսում և դրա սահմաններից դուրս վարձկաններ էին հավաքագրում ֆեոդալական աշխարհագրից: Անգամ այն ժամանակ զինվորական ծառայության առջև ծառանում էին զինվորի պատրաստման որակի, բարոյական կայունության և մարտավիճակի խնդիրներ: Իտալիա ներխուժած Հաննիբալի պրոֆեսիոնալ բանակի և Ջամայի մոտ վերջին ճակատամարտում Կարթագենի նորակոչիկ աշխարհագորայինների միջև որակական մեծ տարբերություն կար: Արդյունքները նույնպես տարբեր էին:

Պահեստագործի դերը մեծացավ 19-րդ դարում՝ մեծ բանակների դարաշրջանում: Այդ ժամանակ աշխարհի առաջատար երկրների զինված ուժեր զորակոչված զինվորների թիվը հասել էր հարյուր հազարների, իսկ 20-րդ դարում՝ պարտադիր զորակոչի արդյունքում, զինծառայողների թիվը հասավ միլիոնների: Քանի որ պարտադիր ժամկետային ծառայությունը կարճատև էր (մինչև 3 տարի), ապա պակասը հիմնականում լրացվում էր պահեստագործ զորացրված անձանցով: Դա դրական ազդեցություն ունեցավ պահեստագորայինների զինպատրաստության որակի վրա, հատկապես վարժական հավաքներին նրանց կանոնավոր մասնակցության դեպքում: Այդուհանդերձ, համաշխարհային I և II լայնամասշտաբ պատերազմների ժամանակ բանակները շատ արագ կորցրին իրենց զինավարժ պահեստագործ և ստիպված էին բանակում չծառայած մարդկանց զորահավաք կազմակերպել և հենց մարտերի ընթացքում վարժել նրանց:

Թշնամի գերտերությունների միջև գտնվող փոքր և միջին երկրները պահեստագործի կառուցման խնդիրներում ամենաշատն են տուժել: 20-րդ դարասկզբին դրանք էին Բելգիան և Շվեյցարիան: Սառը պատերազմի ժամանակ նույն վիճակն էր տիրում Ավստրիայում, Ֆինլանդիայում և Շվեյցարիայում: Խաղաղ ժամանակներում այդ երկրները չէին կարող իրենց թույլ տալ բազմաքանակ և լավ հագեցված զինված ուժեր պահել: Մյուս կողմից էլ, փոքր բանակը չէր կարող արդյունավետորեն դիմակայել ագրեսորին: Ուրեմն նման երկրներն իրենց համեստ բյուջեների պայմաններում պետք է բազմաթիվ և որակյալ պահեստագորային համակարգ ստեղծեին ընդամենը գոյատևելու համար: Այսպիսով՝ մեր ուսումնասիրության առաջին գլխում ընդգրկվել են Ավստրիան, Ֆինլանդիան և Շվեյցարիան:

Վրաստանի և Ուկրաինայի մասին խոսվում է երկրորդ գլխում: Ի տարբերություն առաջին գլխում ընդգրկված չեզոք եվրոպական երկրների՝ նրանք իրենց սեփական պահեստագորային համակարգերը ստեղծել են կարճ ժամանակում, սպառնալիքի ճնշման տակ: Դրանք տարբեր են, քանի որ այդ պետություններն անցել են ավելի հզոր հակառակորդների դեմ իրական ռազմական գործողությունների միջով: Վրացական և

ուկրաինական ղեկավարները վերակազմակերպել են իրենց պահեստազորային համակարգերը և այնտեղ որոշակի փոփոխություններ են կատարել:

ՆԱՏՕ-ի անդամ երկրներն ընդգրկված են այս աշխատանքի երրորդ գլխում: Նրանք իրենց պահեստազորային համակարգը ստեղծում և զարգացնում են բոլոր անդամ երկրների կողմից զինված ուժերում պարտադիր զորակոչից հրաժարվելու պայմաններում: Պայմանագրային զինծառայողներով համալրելու համակարգը մեծապես կախված է արդյունավետ պահեստազորային համակարգի առկայությունից, և այդ դեպքում նախկին զինծառայողներից կազմված՝ զինպատրաստություն անցած անձանց համալրումը շատ դանդաղ է ընթանում: Վերլուծության ենթարկված երեք պետություններից Մեծ Բրիտանիան է, որը պահեստազորն ընդլայնող պրոֆեսիոնալ կանոնավոր զինված ուժերի կառուցման առավել մեծ փորձ ունի, և այդ է պատճառը, որ այն դարձել է այս խմբի ուսումնասիրության առանցքային առարկան: Բացի այդ, այս գլխում մենք համեմատում ենք Գերմանիայի և Լեհաստանի կողմից տարածքային պաշտպանության համակարգերի երկու մոտեցումները:

Ինչ վերաբերում է հենց պահեստազորին, ապա այն լինում է երկու տեսակի՝ կազմակերպված, երբ պահեստազորայինները նախապես կազմակերպվում են մեկ կամ մյուս խմբի մեջ, և անհատական, երբ պահեստազորայինները խմբվում են ըստ անհրաժեշտության: Կազմակերպված պահեստազորն առավել հետաքրքիրն է, քանի որ այն ոչ միայն կանոնավոր բանակի ամրապնդման միջոցով, ինչպես անհատական պահեստազորի դեպքում, այլ նաև նոր զորամասերի և դիվիզիաների տեղակայման միջոցով զինված ուժերի ընդլայնման աղբյուրն է:

Կազմակերպված պահեստազորը կարող է անվանապես բաժանել նրանց, որոնք ընդգրկվելու են կանոնավոր զորամասերում, և նրանց, որոնցից առանձին՝ կանոնավոր զորամասեր են կազմվելու: Ռազմի դաշտում այդ ուժերը կարող են ուժեղացնել զինված ուժերի կարողությունները:

Կազմակերպված պահեստազորի երկրորդ խմբում են տարածքային պաշտպանության զորամասերը: Դրանք հիմնականում օգտագործվում են կանոնավոր զինված ուժերի թիկունքում և պաշտպանական ֆունկցիա են կատարում: Տարածքային պաշտպանության զորամասերի առաջադրանքն է կանոնավոր զինված ուժերն ազատել պաշտպանական խնդիրներից, որը վերջիններիս թույլ է տալիս մարտերի ընթացքում կենտրոնանալ կարևորագույն առաջադրանքների կատարման վրա: Տարածքային պաշտպանության ուժերը հաճախ կազմվում են առողջական կամ տարիքային սահմանափակում ունեցող զինապարտ անձանցից: Երբեմն նրանց պատասխանատվության տակ գտնվող տարածքը համապատասխանում է տվյալ զորամասի զինվորների բնակության վայրին, որը նրանց կանոնավոր զինված ուժերի և թշնամու նկատմամբ առավելություն է տալիս, քանի որ նրանք ծանոթ են տեղանքին: Նման գիտելիքները տարածքային ուժերին թույլ են տալիս պարտիզանական գործունեություն ծավալել, երբ թշնամին ներխուժի իրենց հայրենի տարածքը: Շատ երկրներ այդ ուժերի առաջ այդպիսի հստակ առաջադրանքներ են դնում:

1. Չեզոք երկրների պահեստազորի լավագույն փորձը

Ավստրիա

Ավստրիայի Հանրապետության զինված ուժերում պահեստազորի կառուցվածքը, ձևավորման գործընթացը և ֆունկցիաները և, հատկապես, նրա ձևավոխումը ուղղակիորեն բխում են երկրի ռազմական և քաղաքական իրավիճակից և խիստ փոխկապակցված են առկա ռազմական սպառնալիքների աստիճանի հետ:

2-րդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ավստրիայի տարածքը բաժանվեց օկուպացիոն գոտիների: Հակառակ Ավստրիայի՝ ինքնիշխան պետություն դառնալու և օտարերկրյա ռազմակայաններից ազատվելու ձգտումներին՝ գրեթե բռնի կերպով նրան չեզոքության կարգավիճակ պարտադրվեց: Տեղական բանակցությունների արդյունքում 1955 թ. մայիսի 15-ին Վիեննայում ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներկայացուցիչների կողմից պայմանագիր ստորագրվեց անկախության վերահաստատման և ժողովրդավարական Ավստրիայի մասին: Ավստրիայի չեզոքության մասին 1955 թ. հոկտեմբերի 26-ի սահմանադրական օրենքն իր հերթին հայտարարում է, որ «հանուն արտաքին անկախության տեղական պահպանման և իր տարածքների անձեռնմխելիության նպատակով Ավստրիան սեփական կամքով հայտարարում է իր մշտական չեզոքությունը: Ավստրիան կպահպանի ու կպաշտպանի դա իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով»:

Այս նոր պայմաններում Ավստրիան, երբ այլևս չէր կարող ապավինել իր ավանդական դաշնակիցներին կամ միանալ որևէ պաշտպանական դաշինքի, ստիպված էր իր ազգային պաշտպանությունն ապահովել համեմատաբար սահմանափակ ռեսուրսների հաշվին: Ստեղծված իրավիճակում առավել արդյունավետ և հարմար տարբերակը ուժեղ պահեստազորային բաղադրիչով տարածքային պաշտպանության համակարգի կազմակերպումն էր: Կարելի է ասել, որ Ավստրիայի համակարգը հենվում է հարևան Շվեյցարիայի տարածքային պաշտպանության մոդելի վրա, սակայն որոշակի տարբերություններով, այդ թվում՝ ավելի ցածր աստիճանի համապարփակ պաշտպանությունը:

Հիմնականում պահեստազորով համալրված տարածքային զորքերը երաշխավորում էին, որ զորահավաքը կապահովի իրենց տարածաշրջանին լավատեղյակ, պատրաստված զորամասերով, սակայն խաղաղ պայմաններում ֆինանսավորման մեծ միջոցներ չի պահանջի: Տարածքային զորքերի անձնակազմի մեծ մասը խաղաղ ժամանակ զբաղվում էր իր սովորական աշխատանքով: Նրանք համազգեստ չէին կրում, և նրանց զենքն ու հանդերձանքը պահվում էին պահեստում, և անձնակազմի միայն մի փոքր մասն էր բյուջեից կանոնավոր ֆինանսավորում ստանում: Խաղաղ պայմաններում պահեստազորի հիմնական խնդիրներն էին զորավարությունները և վերապատրաստումը:

Տարածքային պաշտպանության հզոր համակարգի ստեղծման համար կարևոր գաղափարական և քարոզչությանն առնչվող գործոնն այն փաստն էր, որ Ավստրիան կարող էր բազմափառ մարդկանց զենքի կոչել և, դրանով հանդերձ, զինված ուժերի զարգացման բացառապես կամ մասամբ պաշտպանական ուղղվածություն ունենալ:

Այսպիսով՝ Ավստրիայի պաշտպանության քաղաքականությունը հիմնված էր «զսպման և տարհանոգման» ռազմավարության վրա: Ռազմական ոլորտի զարգացման հիմքը տարածքային պաշտպանության սկզբունքն էր, որն ապավինում էր երկրի ռելիեֆին և աշխարհագրությանը՝ հատկապես նրա լեռներին և անտառներին:

Չնայած որ Ավստրիան չեզոք երկիր էր և, ըստ իր սեփական ռազմաքաղաքական ղեկավարության հաշվարկների, այլ երկրների ագրեսիայի թիրախ չէր կարող դառնալ, այնուամենայնիվ, կարծում էին, որ երկրի տարածքը կարող էր խորհրդային բանակի կողմից օգտագործվել ՆԱՏՕ-ի արևմտագերմանական խմբավորման վրա կողային (ֆլանգային) հարված հասցնելու համար: Նման գործողությունների հավանականություն կար նաև ՆԱՏՕ-ի կողմից:

Ըստ պաշտպանության դոկտրինի՝ ագրեսիայի դեպքում Ավստրիայի զինված ուժերը կիրառելու են ագրեսորին դանդաղեցնելու և արնաքամ անելու՝ «հարվածի՛ր և փախի՛ր» մարտավարությունը՝ միևնույն ժամանակ խուսափելով ճակատային լայնածավալ մարտերից: Հակառակորդի հարձակումն ուղղորդվելու է, և դիվերսիոն խմբերի և սահմանափակ ուժերի հակազորհներին այն ավելի խոցելի դարձնելու համար պաշտպանությունը կազմակերպվելու է առաջխաղացման հիմնական տարածքների երկայնքով կամ դրանց մոտ նախօրոք ընտրված առանցքային գոտիներում և ամրացված կետերում:

Միևնույն ժամանակ, Ավստրիայի զինված ուժերը կազմված են մշտական հերթապահ ուժերից (Bereitschaftstruppe), արագաշատ աշխարհազորից (Mobile Landwehr) և մշտական աշխարհազորից (Raumgebundene Landwehr):

Ըստ էության, արագաշատ աշխարհազորը կազմված է պահեստազորայիններից. զորահավաքի ժամանակ 8 մեխանիզացված բրիգադ է զորակոչվում: Մշտական աշխարհազորը բաղկացած է ավելի քան 20 հետևակային գնդից, որոնք նույնպես համալրվում են զորահավաքի ժամանակ, սակայն նախատեսված են աշխարհազորայինների բնակության վայրերում տեղակայման համար: Աշխարհազորում ծառայողներն իրենց զենքը, հանդերձանքը և համազգեստը տանն են պահում:

Պատերազմի դեպքում բոլոր երեք բաղադրիչները միանում են երկու բանակային կորպուսներին, և նախապես հստակորեն սահմանվում են մշտական զորամասերի առաջադրանքները: Ավստրիայի հիմնականում լեռնային լանդշաֆտի պայմաններում մշտական աշխարհազորը գործում է ըստ առանցքային մայրուղիների և ցածրադիր վայրերի պաշտպանության ռազմավարության:

Ավստրիան պաշտպանական կառույցների մի հզոր ցանց է ստեղծել և իր տրանսպորտային ենթակառուցվածքի մեծ մասը հագեցրել է պայթուցիկով: Լանդշաֆտը, ամրությունները և հանքերը ծառայում են թշնամուն դանդաղեցնելու և կանգնեցնելու, նրա հարձակվող շարայուները առանձին մասերի պառակտելու համար, որպեսզի դրանք ի վիճակի չլինեն օգնել միմյանց:

Լեռներում մարտեր վարելու համար վարժված հատուկ նշանակության գումարտակները (Jagdkommando) ֆլանգներից և թիկունքից հարվածելու են ագրեսորի ետ մնացած զորքերին:

Միևնույն ժամանակ, մշտական հերթապահ ուժերը և արագաշաժ աշխարհագորը շեղում են ագրեսորի հարձակման առավել վտանգավոր ուղղությունները և հակահարձակման անցնում:

Նմանատիպ համակարգերի պես, Ավստրիայի տարածքային պաշտպանության համակարգը 17 տարեկան և դրանից բարձր տարիքի բոլոր տղամարդկանց համար պարտադիր զորակոչ է պահանջում: 6-9 ամիս տևող հիմնական զինպատրաստությունից հետո բոլոր պահեստազորայիները հետագա 20 տարիների ընթացքում պետք է կանոնավոր վերապատրաստում անցնեն: Որոշակի կատեգորիաների համար գործում է այլընտրանքային ծառայության տարբերակը: Չնայած զորահավաքի այս մեծ ներուժին, ի տարբերություն Շվեյցարիայի ընդհանուր զորահավաքի հայեցակարգի, Սառը պատերազմի ավարտին զորահավաքի ենթարկված զինված ուժերի ընդհանուր թվաքանակը կազմել էր 200 հազար մարդ:

Վարչավայի պայմանագրի լուծարումը և Արևմուտքի և Արևելքի միջև լարվածության թուլացումը հանգեցրին Ավստրիայի պաշտպանության քաղաքականության հիմնովին վերանայմանը: Ավստրիական ռազմավարները հեռացան լայնամասշտաբ ագրեսիայի դեմ երկրի ողջ տարածքի պաշտպանությունը պահանջող պատրաստվածության հայեցակարգից: Արդյունքում, Ավստրիայի զինված ուժերը վերակազմավորվեցին, և մի նոր ռազմական դոկտրին ընդունվեց: Այդ նոր դոկտրինով նախատեսվում էր բանակն օգտագործել մեծ թվով փախստականների տեղաշարժի և տարածաշրջանների միջև բռնության տարածման հետևանքով ավստրիական սահմանների մոտ տեղական հակամարտությունները մեղմելու համար: Այս փոփոխությունները զինվորական ստորաբաժանումների և արձագանքման զորամասերի վերապատրաստման անհրաժեշտություն առաջացրին, որպեսզի նրանք կարողանան արձագանքել կոնկրետ իրավիճակներին:

Պահեստազորայիների վերապատրաստման պահանջները համապատասխանաբար նվազեցին: 1990-ականների սկզբին զորահավաքի ենթարկված զինված ուժերի թվաքանակը կրճատվեց՝ հասնելով մինչև 120 հազար մարդու: Ավստրիայի քաղաքացիների զինպատրաստության և պահեստազորի ծառայության ժամկետները կրճատվեցին, և լայն տարածում ստացավ այլընտրանքային ծառայությունը: Այս անգամ Ավստրիայի համար հիմնական ռազմական սպառնալիք էին համարվում հարևան Բալկանյան տարածաշրջանում ծագած հակամարտությունները:

Հետագա փոփոխությունները կապված էին Եվրոպական միությանը 1995 թ. Ավստրիայի անդամակցության և Մասստրիխտի համաձայնագրի ստորագրման հետ, որն ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականություն (ԸԱՊԲ) սահմանեց և Եվրոպական միության համատեղ պաշտպանության քաղաքականության և համատեղ պաշտպանության ստեղծման հեռանկարներ բացեց: Ավստրիայի դաշնային սահմանադրությունը լրացվեց մի հատուկ դրույթով, ըստ որի՝ Ավստրիայի չեզոքության օրենքը չի սահմանափակում իր մասնակցությունը ԸԱՊԲ-ին: Ամստերդամի համաձայնագրի վավերացումից հետո Ավստրիայի Ազգային ժողովը 1998 թ-ին Սահմանադրության մեջ ևս մեկ փոփոխություն կատարեց, ըստ որի՝ Ավստրիան իրավունք ստացավ մասնակցելու «Պիտերսբուրգի առաջադրանքներով» (Petersberg Tasks) (ձգնաժամային կառավարման, այդ թվում՝ խաղաղապահ գործողություններում ռազմական առաքելությունների համատեքստում) սահմանված մի ողջ շարք միջոցառումների: 1996 թ-ին Ավստրիան միացավ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին և Բոսնիայում մասնակցեց խաղաղապահ առաքելությանը:


Այսպիսով՝ ԵՄ ԸԱՊԲ-ում իր ակտիվ մասնակցության շնորհիվ Ավստրիան կտրուկ կերպով փոխել է իր մշտական չեզոքության կարգավիճակը: Այսօր, ըստ միջազգային իրավունքի սկզբունքների, Ավստրիայի կարգավիճակը համապատասխանում է *չմիավորված*, այլ ոչ թե չեզոք երկրի սահմանմանը: Այս անգամ ԵՄ պաշտպանությունը և Ավստրիայի պաշտպանությունը սերտորեն միահյուսված են, և միջազգային հակամարտությունների կանխման և ձգնաժամերի կառավարման ջանքերում ակտիվ մասնակցությունը Ավստրիայի պաշտպանության քաղաքականության առավել կարևոր բաղադրիչն է:

Ազգային անվտանգությանն առնչվող արտաքին քաղաքականության վերոհիշյալ փոփոխությունները, ինչպես նաև Ավստրիայի տարածքի նկատմամբ փաստացի ուղղակի ռազմական սպառնալիքի բացակայությունը հսկայական ազդեցություն ունեցան Ավստրիայի զինված ուժերի և, մասնավորապես, դրա պահեստազորային բաղադրիչի բարեփոխումների վրա: Ըստ զինված ուժերի զարգացման 2013 թ. ծրագրի՝ տեղակայված պահեստազորայինների ընդհանուր թվաքանակը կազմում էր 55 հազար, իսկ զինված ուժերի հիմնական մարտական բաղադրիչը կազմված էր միշտ մարտի պատրաստ 4 բրիգադից (չհաշված օդային դեսանտային բաղադրիչը): Ապագայում լայնածավալ զորահավաքներից խուսափելու պլանները հիմնավորվում են այն փաստով, որ ռազմական տեխնիկայի քանակն արդեն կրճատվել է գրեթե մեկ երրորդով, որը բավարար է վերը նշված 55 հազար տեղակայված զինված ուժերի կարիքները հոգալու համար:

Դեռևս ընդհանուր զորակոչի առկայության պայմաններում, ամեն տարի զինվորական ծառայության են գնում (զինապարտության տարիքի 48 հազար մարդուց) 22 հազար նոր նորակոչիկներ, և ևս 14 հազար մարդ այլընտրանքային ծառայություն է անցնում:

Ամենամեծ փոփոխությունները կատարվեցին պահեստային զորքերում (Landwehr): Սկսած 2006 թ-ից՝ պահեստազորում ծառայելը և, փաստորեն, նաև պահեստազորայինների վերապատրաստումը դարձան կամավոր: 1998 թ-ից ի վեր՝ կանանց թույլ էր տրվում կամավորության հիմունքներով ծառայել պահեստազորում:

Այսպիսով՝ այսօր ավստրիական զինված ուժերի պահեստազորում ծառայելը կամավոր է, և այն համալրվում է աշխարհագրորի հիման վրա: Կառուցվածքային առումով՝ պահեստային ուժերը բաժանվում են 9 տարածքային հրամանատարության, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում է պահեստազորի հետևակային մեկ գումարտակ (բացառությամբ Վիեննայի տարածքային հրամանատարության, որն ունի երկուսը) և մեկ առանձին ինժեներատեխնիկական վաշտ: Կան նաև նյութատեխնիկական ապահովման մեկ պահեստազորային գումարտակ, որը ենթարկվում է թիկունքի միասնական հրամանատարությանը, և բնական աղետների արձագանքման մեկ գումարտակ: Պահեստազորի ընդհանուր թվաքանակը հասնում է մինչև 20 հազարի:




Պահեստազորի յուրաքանչյուր հետևակային գումարտակ կազմված է հրամանատարական շտաբից, գլխավոր շտաբի վաշտից և երեք հետևակային վաշտերից: Հետևակային գումարտակն ավանդաբար զինված է ծանր հրաձգային զենքով, ինչպիսիք են կառավարվող հակատանկային հրթիռները և ականանետները: Այդուհանդերձ, ներկայիս դոկտրինը պահեստազորի հետևակային գումարտակի առջև այնպիսի առաջադրանքներ է դնում, ինչպիսիք են աղետների հետևանքների վերացումը, անվտանգության ոստիկանության աջակցությունը և կարևոր շենքերի և օբյեկտների պահպանությունը: Ապագայում նախատեսվում է ամբողջությամբ հրաժարվել ծանր հրաձգային զենքից և շեշտն առավել դնել նրանց նյութատեխնիկական ապահովման, բուժօգնության և կապի կարողությունների վրա:

Ինժեներատեխնիկական վաշտերի առաջադրանքն է սպասարկել ենթակառուցվածքները, մեքենասարքավորումներով հագեցնել տարածքները և զբաղվել աղետների հետևանքների վերականգնողական աշխատանքներով: Բոլոր վաշտերի վերապատրաստման և մատակարարման մակարդակները նույնն են: Վաշտը ենթարկվում է Վիեննայի տարածքային հրամանատարությանը, որը մասնագիտացած է ականազերծման աշխատանքներում:

Պահեստազորի նյութատեխնիկական ապահովման գումարտակը կազմված է հրամանատարական շտաբի վաշտից, գլխավոր շտաբի վաշտից, չորս տրանսպորտային վաշտերից և անվտանգության վաշտից:

Պետք է նշել, որ բացի ներքին առաջադրանքներից՝ պահեստազորը դիտարկվում է որպես այլ երկրներում խաղաղապահ գործողությունների իրականացման համար ավստրիական անձնակազմի հիմնական աղբյուրը:

Փորձագետները նշում են, որ 2006 թ-ից ի վեր, երբ պահեստազորի հավաքագրումը դարձավ կամավոր,



հետևողականորեն պակասեց կամավոր պահեստազորայինների քանակը: Այս իրավիճակից դուրս գալու և զինծառայության համար արտոնություններ սահմանելու նպատակով Ավստրիան պահեստազորի վերապատրաստման և մասնագիտական զարգացման ճկուն համակարգ է իրականացնում: Պահեստազորայիններին նաև քաղաքացիական մասնագիտությունների վերապատրաստման դասընթացներ և ֆինանսական արտոնությունների մի լայն շրջանակ են առաջարկվում:

Պաշտպանության նախարարության կայքում կարելի է գտնել մանրամասն տեղեկություններ զինծառայության մասին, այդ թվում՝ թափուր տեղերի ցանկը (այդ թվում՝ խաղաղապահ գործողությունների համար), ծառայության կարիերայի առաջխաղացման գործընթացը, վերապատրաստման դասընթացները և այլն: Օրինակ՝ որոշակի տևողությամբ վերապատրաստման ենթակա պահեստազորայինը կարող է ինքը որոշել վերապատրաստման փաստացի ժամկետները: Կարիերայում առաջ գնալու համար պահեստազորայինը պետք է յուրաքանչյուր կոնկրետ զինվորական աստիճանի/պաշտոնի համար որոշակի դասընթացներ ավարտի (երբեմն հեռակա ուսուցման հիմունքներով) և պահեստազորում ծառայելու որոշակի ստաժ, ինչպես նաև ակտիվ ծառայության ստաժ ունենա: Պահեստազորայինը կարող է նաև կայքի միջոցով հաշվել հատուկ գործողությունների, վերապատրաստման, օտարերկրյա առաքելությունների և այլնի մասնակցելու համար իր վարձատրության մոտավոր չափը:

Պահեստազորային դառնալու համար զինծառայողը պետք է ավարտի ժամկետային ծառայությունը, իսկ հետո անցնի վերապատրաստման դասընթացների համակարգով: Սերժանտի (Wachtmeister) և դրանից բարձր կոչումով պահեստազորայինը կարող է դիմել սպայական աստիճան ստանալու համար: Խաղաղապահ գործողություններում մասնակցությունը վերապատրաստման դասընթաց է համարվում և, հատկապես սպաների համար, շատ ավելի է հեշտացնում առաջխաղացումը: Պահեստազորի սպաները, հատկապես նրանք, ովքեր հազվադեպ զինվորական մասնագիտությունների (հոգեբաններ, լրագրողներ և այլն) են տիրապետում, հաճախ վերապատրաստման դասընթացների փոխարեն մասնակցում են օտարերկրյա առաքելություններին՝ առանց հայրենիքում ծառայելու: Պահեստազորայինը կարող է պարտադիր զինակոչի ենթարկվել միայն զորահավաքների կամ պահեստազորի ընդհանուր զինավարժությունների դեպքում:

Պահեստազորայինի զինվորական կրթությունն իրականացվում է կանոնավոր բանակի զորամասերում, Լինց քաղաքի մոտ գտնվող սերժանտական դպրոցում և Թերեզիան ռազմական ակադեմիայում:

Ամփոփելով նշենք, որ Ավստրիան Սառը պատերազմի դարաշրջանից տարածքային համապարփակ պաշտպանության համակարգի կազմակերպման փորձ է ձեռք բերել, որը հիմնվում է պահեստազորի բազմաթիվ ուժերի վրա: Այս անգամ Ավստրիայի հրամանատարությունը գրեթե ամբողջությամբ հեռացել է այդ հայեցակարգից՝ հաշվի առնելով Ավստրիայի տարածքի վրա ուղղակի ռազմական սպառնալիքների օբյեկտիվ բացակայությունը: Այսօրվա պահեստազորը համալրված է կամավորներով, նրանց նպատակը հիմնականում ոչ ռազմական ձգնաժամերի կառավարման խնդիրներն են: Ընդհանուր առմամբ, նրանք համապատասխանում են Ավստրիայի ազգային անվտանգության սպառնալիքների բնույթին, օրինակ՝ երբ պահեստազորն օգտագործվում է սիրիացի փախստականներից Ավստրիայի սահմանը արգելափակելու համար:

Միևնույն ժամանակ, Ավստրիայում դեռևս պահպանվում է պարտադիր զինակոչային ծառայությունը, որն ավելի շատ թելադրված է ավանդույթով, քան անհրաժեշտությամբ: 2013 թ.

հունվարին Ավստրիան հանրաքվե անցկացրեց, որը պետք է որոշեր, թե զինված ուժերն արդյոք պետք է անցնի լիարժեք պայմանագրային ծառայության, սակայն քաղաքացիների 60 %-ը քվեարկեց զորակոչի պահպանման օգտին:

Շվեյցարիա

Շատերը Շվեյցարիան դիտարկում են որպես աշխարհագրի հիման վրա կառուցված՝ ազգային պաշտպանության լավագույն մոդելը: Դրա անձնական կազմի զգալի մասը պահեստազորն է՝ կազմված Շվեյցարիայի արական սեռի քաղաքացիների մեծամասնությունից: Այս իրավիճակը լավագույնս պատկերվում է շվեյցարական ասացվածքում՝ «Շվեյցարիան բանակ չունի, բանակը ՀԵՆՑ Շվեյցարիան է»:

Շվեյցարիայի ազգային անվտանգության համակարգի և ազգային պաշտպանության կառուցվածքի հիմքը այդ երկրի չեզոք կարգավիճակն է, որը Շվեյցարիայի կառավարությունը դեռևս պահպանում է՝ անկախ Եվրոպայում ռազմական և քաղաքական իրավիճակի ցանկացած փոփոխությունից: Շվեյցարիան հայտարարել է իր չեզոքությունը մոտ 500 տարի առաջ՝ այն բանից հետո, երբ 1499 թ. կնքվեց Բազելի խաղաղության համաձայնագիրը, որը ճանաչեց Հռոմեական Սրբազան կայսրությունից շվեյցարական կանտոնների վերջնական անկախությունը: Շվեյցարիա Նապոլեոնի փաստացի ներխուժումից հետո Եվրոպական պատերազմներում Շվեյցարիայի չմիջամտելու քաղաքականությունը կասեցվեց 1798 թ-ին, որից հետո երկիրը միայն ձևականորեն պահպանեց իր անկախությունը:

Նապոլեոնյան պատերազմների ավարտից հետո՝ 1814 թ., Վիեննայի Կոնգրեսը որոշեց ճանաչել Շվեյցարիայի նորացված Համադաշնության մշտական չեզոքության կարգավիճակը: 1815 թ. նոյեմբերի 8-ին Փարիզում ստորագրվեց Շվեյցարիայի մշտական չեզոքության ճանաչման և երաշխավորման և նրա տարածքների անձեռնմխելիության ակտը: Այս փաստաթուղթը Շվեյցարիայի չեզոքության սկզբունքների վրա հիմնված՝ հետագա կառավարման հիմքը դարձավ, որը ճանաչվեց Եվրոպական անվտանգության բնապատկերում գտնվող հետնապոլեոնյան բոլոր առաջատար Եվրոպական պետությունների կողմից:

Այսպիսով՝ Շվեյցարիայի ժամանակակից մոդելը սկիզբ առավ 1817 թ. ռազմական բարեփոխումներից, երբ ստեղծվեց աշխարհագրի վրա հիմնված շվեյցարական բանակը: Այս բանակում միայն հրահանգիչներն են կադրային զինծառայողներ: Ծառայության համար հարյուր քաղաքացիներից պատահական վիճակահանության միջոցով միայն երկու նոր նորակոչիկ է ընտրվում՝ փոխարինման տարբերակով: Հենց սկզբից շվեյցարական համակարգը խաղաղ բնակչության համեմատ զինծառայողների բարձր տոկոս էր սահմանել: Թունի (Thun) դաշնային ռազմական ուսումնարանը, որը հիմնադրվել է 1819 թ., համատեղ ուսումնառազմական ճամբարները և Շվեյցարիայի ռազմական ակումբները նշանակալի ավանդ են բերում բազմալեզու ազգի համախմբման ու Շվեյցարիայի ազգային ինքնության ստեղծման գործին: Ըստ էության, շվեյցարական աշխարհագրային բանակն էր կերտում Շվեյցարիայի ժողովրդին:

Ներկայիս ընդհանուր զորակոչի կարգը ստեղծվել է 1874 թ. բարեփոխումների արդյունքում, երբ պահեստազորը բաժանվեց *Auszug-ի*, *Landwehr-ի* և *Landsturm-ի* միջև,

ինչպես արուսական մոդելում: Այս կառուցվածքով շվեյցարական բանակը վերածվեց մինչ 20-րդ դարի ժամանակաշրջանի կանոնավոր զինված ուժերի համալրման դասական աշխարհագրային համակարգի:

Հարկ է նշել, որ «աշխարհագրի» իր ողջ պատմության ընթացքում շվեյցարական բանակը հազիվ թե մասնակցած լինի որևէ ռազմական գործողության: Այդ ընթացքում շվեյցարական զինված ուժերը միայն չորս համընդհանուր զորահավաք է անցկացրել, և դրանցից յուրաքանչյուրը Շվեյցարիայի ինքնիշխանությանը և չեզոքությանը սպառնալիքների պատասխանն էր. 1856 թ.՝ արուսական սպառնալիքը, 1870-1871 թթ.՝ ֆրանս-արուսական պատերազմը, 1914 թ.՝ օգոստոսի 3-ին՝ 1-ին ՀՊ սկիզբը, 1939 թ. սեպտեմբերի 1-ին՝ 2-րդ ՀՊ սկիզբը:

Հենց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ էր, որ շվեյցարական բանակն անմատչելի բանակի անունը վաստակեց: Ֆրանսիայի անկումից հետո Շվեյցարիան գեներալ Անրի Գիսանին (Henri Guisan) նշանակեց որպես գլխավոր հրամանատար և ընդունեց Ազգային պաշտպանության պլանը (National Redoubt Plan), որի համաձայն՝ թշնամուն առավելագույնս զսպելու նպատակով բանակի համատարած զորահավաք հայտարարվեց, ենթակառուցվածքային բոլոր օբյեկտները ականապատվեցին, և երկրի ամբողջ պարագծով մեկ մի քանի ամրացված գոտիներ ստեղծվեցին: Այդ պլանով նախատեսվում էր, որ թշնամու հարձակման ժամանակ բանակը կնահանջի դեպի լեռները՝ իր հետևում ամբողջությամբ ոչնչացնելով ենթակառուցվածքները: Այնուհետև դիմադրությունը կիրականացվի կիսապարտիզանական ստորաբաժանման կողմից՝ ծանր լեռնային տեղանքում: Սակայն Անրի Գիսանի ամենահայտնի հրամանն այն էր, որ ցանկացած պետական մարմնի կողմից հնչեցված ցանկացած հանձնման հայտարարություն պետք է համարել որպես սադրանք:

Ենթադրվում է, որ հենց այդ համապարփակ դիմադրությունն էր, որ գերմանական Վերմախտին ստիպեց հետ կանգնել Շվեյցարիայի օկուպացման պլաններից: Շվեյցարական օդուժը, այնուամենայնիվ, մասնակցեց 2-րդ ՀՊ օդային մարտերին՝ Լուֆտվաֆեի և դաշնակցային օդուժերի դեմ, որոնք ներխուժել էին չեզոք Շվեյցարիայի տարածք:

«Համապարփակ պաշտպանության» այս դրական փորձը հետագա զարգացում ապրեց Սառը պատերազմի ժամանակ, երբ աշխարհագրի հիման վրա զորքի համալրման համակարգը հասավ իր գագաթնակետին: Այդ դարաշրջանում զինված ուժերի անձնական կազմը գերազանցեց 800 հազարը կամ բնակչության 12 %-ը:

Ինչպես Ավստրիայի դեպքում, ըստ շվեյցարական ռազմաքաղաքական ղեկավարների գնահատման՝ որոշվեց, որ Շվեյցարիան չի կարող այլ երկրի ագրեսիայի թիրախ հանդիսանալ: Սակայն նրանք համոզված էին, որ շվեյցարական տարածքը կարող է խորհրդային բանակի և ՆԱՏՕ-ի միջև մարտադաշտի վերածվել: Օգտվելով Շվեյցարիայի ռելիեֆից և աշխարհագրությունից (երկրի տարածքի 70 %-ը պատված է լեռներով)՝ շվեյցարական զինված ուժերը մասնագիտացված «լեռնային բարիկադների» ռազմավարություն են որդեգրել, որը ենթադրում է դիմադրողական պատերազմ վարել, ականապատել կամուրջներ ու լեռների գագաթները և այլն:

Որպես պաշտպանական ռազմավարության մի բաղադրիչ՝ բանակն ի վիճակի է արագորեն շարքից հանել կամուրջները, թունելները, ավտոմայրուղիները և երկաթուղին: Ըստ պլանի՝ հարձակման դեպքում 3000-ից միջև 6000 տարբեր տրանսպորտային ենթակառուցվածքներ են քանդվելու: Այս նպատակով Շվեյցարիայի բոլոր թունելները և առանցքային կամուրջները հազեցված են հակատանկային թակարդներով և ներսում

տեղադրված պայթուցիկ սարքերով, իսկ եթե երկաթուղային կամուրջները պայթեցվեն, ապա փլուզվելու են դրանց տակով անցնող մայրուղիների վրա: Երկաթուղային և ավտոճանապարհային բոլոր թունելների պայթեցումն այնպես է կազմակերպված, որ ամբողջովին կտրվեն երկիր մուտք գործելու բոլոր ճանապարհները:

Շվեյցարիան անհամար ամրոցներ, ստորգետնյա թաքստոցներ և զինանոցներ ունի, և դրանք հագեցված են կապի բոլոր անհրաժեշտ միջոցներով և դրսից ամբողջությամբ անտեսանելի են: Ալպերում մշտական ամրություններ կան, այդ թվում՝ ստորգետնյա ռազմաօդային ռազմակայանը:

Ինչպես արդեն նշվել է, Սառը պատերազմի ժամանակ Շվեյցարիայի բանակի թվաքանակը հասնում էր 800 հազար մարդու: Սառը պատերազմի ավարտից հետո այդ քանակի պահպանումը դարձավ աննպատակահարմար: Մի շարք քաղաքական գործիչներ և քաղաքացիական կազմակերպություններ առաջարկում էին նույնիսկ ամբողջությամբ լուծարել զինված ուժերը, սակայն հարևան բալկանյան տարածաշրջանում սկիզբ առած զինված հակամարտությունները վերջ դրեցին նման խոսակցություններին:

1995 թ. կազմակերպված «Բանակ 1995» լայնածավալ ռազմական բարեփոխումների արդյունքում զինված ուժերի թվաքանակը կրճատվեց մինչև 400 հազար (բնակչության 5%-ը): Այս բարեփոխումներով նաև կրճատվեց կանոնավոր բանակում ծառայության ժամկետը, և զորահավաքի ենթակա տարիքն իջեցվեց մինչև 42-ը: *Auszug* և *Landsturm* տեսակի պահեստազորները վերացվեցին, սակայն *Landwehr*-ը մնաց՝ ընդգրկելով 32-ից մինչև 42 տարեկան տարիքային խմբերը: Ընդհանուր զորահավաքի դեպքում *Landwehr*-ը վերածվում է երկրորդ գծի պահեստազորի:

Սա, սակայն, Շվեյցարիայի զինված ուժերում բարեփոխումների վերջը չէր: Շվեյցարիայի քաղաքացիները 2003 թ. մայիսի 18-ին կողմ քվեարկեցին «Բանակ XXI» խորագրով նոր ռազմական բարեփոխումների համար: Այս նոր բարեփոխումը կրկին կրճատեց շվեյցարական զինված ուժերի թվաքանակը: Սկսած 2004 թ. հունվարից՝ զինված ուժերի անձնական կազմը կրճատվել է՝ հասնելով 220 հազարի (բնակչության 2,5%-ը), այդ թվում՝ 80 հազար պահեստազորայինները: Զինված ուժերի ընդհանուր թվաքանակը 2013 թ-ին կազմում էր 155 հազար մարդ, իսկ 2016 թ. պլանով այն պետք է նվազեր մինչև 100 հազարը, այդ թվում՝ մինչև 30 հազար *Landwehr*:

Շվեյցարական բանակի առանձնահատկությունը, որը, ըստ էության, աշխարհագրորի է վերածվում, այն է, որ զինվորներն իրենց մոտ են պահում պետական սեփականություն հանդիսացող անձնական զենքը, համազգեստը և հանդերձանքը նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք գրանցվում են որպես *Landwehr*-ի պահեստազորայիններ: Սա զինվորական ղեկավարությանն օգնում է էապես կրճատել պահեստավորման ծախսերը և, անհրաժեշտության դեպքում, արագ զորահավաք կազմակերպել: Զենքը, համազգեստը և հանդերձանքը պահվում են պահեստազորայինների տներում: 1952 և 2007 թթ. ընթացքում զինծառայողները և պահեստազորայինները տանն էին պահում նաև ձեռքի հրազենի զինամթերքը: Ներկայումս, անվտանգության նկատառումներից ելնելով, զինամթերքը պահվում է բանակի պահեստներում:

Ինչպես արդեն ասվել է, շվեյցարական զինված ուժերի գրեթե ողջ անձնական կազմը բաղկացած է պահեստազորից: Անձնական կազմում կադրային սպաները կազմում են մինչև 9 հազար մարդ, որոնց մեծ մասը ծառայում է ռազմաօդային ուժում: Այնուամենայնիվ, որոշ առանձնահատկություններ կիրառվում են:

Շվեյցարիայում ծառայության պիտանի քաղաքացիների զինակոչային տարիքը 19-ից մինչև 26 տարեկանն է: Շվեյցարիայում շարքայինների համար պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 260 օր է, որը բաժանվում է հիմնական ռազմական ուսուցման 18 շաբաթների, որին հաջորդում են յոթ երեքշաբաթյա դասընթացները՝ ընդհանուր առմամբ 21 շաբաթ՝ հետագա 10 տարիների ընթացքում: Զորավարությունները համարվում են պարտադիր զինվորական ծառայություն:

Այսպիսով՝ զինված ուժերի ընդհանուր թվաքանակը որոշվում է ընթացիկ տարում պարտադիր ժամկետային ծառայության մեջ գտնվող 19-ից 32 տարեկան անձանց քանակով: Ի դեպ, ցանկացած պահի զինված ուժերի թվաքանակը հազվադեպ է գերազանցում 25 հազարը՝ 9 հազար մշտական կազմ, գումարած 10-15 հազար ոչ մշտական կազմ (հիմնական ուսուցման կամ վերապատրաստման կարգավիճակում գտնվող պահեստազոր): Տարվա կտրվածքով շարունակական վերապատրաստում է անցնում մոտ 100 հազար մարդ, որից 20-22 հազարը նորակոչիկներ են: Ըստ էության, Շվեյցարիայի բանակի զգալի մասը մշտական անձնական կազմ չունի, սակայն այն լրացվում է ոչ մշտական կազմի հերթափոխի անընդհատ ուսուցման միջոցով:

Այս համակարգը նախատեսված է պարտադիր զինապատրաստության առաջին փուլից հետո ընկած 10 տարիների ընթացքում պահպանելու պահեստազորի որակը: Ըստ էության, այդ պահեստազորայինները զորահավաքի առաջին գծի ռեսուրսն են: Ռազմական ուսուցման անփոփոխ համակարգը լավ զարգացած անձնակազմ և օժանդակ ենթակառուցվածք ունի, որն էլ ապահովում է բանակի աշխարհագրային կազմի պարտադիր վերապատրաստումը: Շվեյցարական համակարգի մեկ այլ առանձնահատկությունն էլ մեծ թվով վերապատրաստմամբ ղեկավարող զորամասերի առկայությունն է:

Այլընտրանքային ծառայությունը Շվեյցարիայում սկսել է կիրառվել 1996 թ-ից: Այն կարող է ներառել սոցիալական աշխատանքը, ճանապարհային նշանների վերանորոգումը, ծերերին օգնությունը և այլն: Այս ծառայությունը տևում է 340 օր՝ զինվորական ծառայությունից 50 %-ով ավելի: Զինակոչային տարիքի ցանկացած մարդ կարող է դիմել այլընտրանքային ծառայության համար՝ զինվորական ծառայության փոխարեն: Վերջին տարիներին զինակոչային տարիքի ավելի քան 15 հազար մարդ այլընտրանքային ծառայություն է անցել:

Զինակոչային տարիքի տղամարդկանց ոչ ավելի, քան 20 %-ն է ազատվում կանոնավոր և այլընտրանքային ծառայությունից, ինչը սովորաբար պայմանավորված է նրանց առողջական վիճակով: Այն անձինք, ովքեր Շվեյցարիայի քաղաքացի են դարձել 25 կամ ավելի տարեկանում, նույնպես ազատվում են զորակոչից: Այս կատեգորիայի անձանցից լրացուցիչ հարկային հավելավճար է գանձվում, որը կազմում է նրանց համախառն եկամտի 3 %-ը:

Ինչ վերաբերում է հրամանատարական կազմին, ապա կրտսեր սպայական կազմի կանոնավոր ծառայության ժամկետը 430 օր է, ավագ սպայական կազմինը՝ 500 օր, իսկ հերթափոխայինների (պահեստազորի սպաների) համար այն 600 օր է: Ապագա կրտսեր սպայական կազմը և պահեստազորի հերթափոխը մասնակցում են անձնակազմի մասնագիտացված դասընթացներին (KVK): Հրամանատարական կազմի ուսումնական և վերապատրաստման բոլոր դասընթացներն անցկացվում են զինված ուժերի ուսումնարանում:

32 տարեկան դառնալուց հետո ժամկետային ծառայողը պայմանով, որ պարտադիր 260 օր արդեն ծառայել է, անցնում է պահեստազոր (պաշտոնապես կոչվում է *Landwehr*): Պահեստազորայինը մինչև 42 տարեկանը մնում է *Landwehr*-ում: Այդ 10 տարիների ընթացքում նա պետք է երեք երկշաբաթյա վերապատրաստում անցնի: Այսպիսով, չնայած *Landwehr*-ի

գորահավաքային ռեսուրսը հասնում է 200 հազար մարդու, նրա փաստացի ընդհանուր թվաքանակը սահմանափակվում է նրանցով, ովքեր ընթացիկ տարում վերապատրաստում են անցնում, սովորաբար՝ 30-32 հազար հոգի:

Landwehr-ը չի օգտագործվում ռազմական գործառնների (հետևակային գործառնները կազմված են 9 բրիգադներից) կամ առաջին գծի օժանդակ գործառնների համալրման համար: Դրա առաջադրանքն է պաշտպանել ենթակառուցվածքային օբյեկտները, ծառայել երկրի ներսում գտնվող լեռնային ամրոցներում և այլ օժանդակ գործողություններ կատարել: Landwehr-ի գործերը կազմվում են առանձին վաշտերից և գումարտակներից, որոնք գորահավաքի ժամանակ գտնվում են տարածքային 4 հրամանատարության ենթակայության ներքո:

Ամփոփելով նշենք, որ, չնայած 1991 թ-ից հետո Եվրոպայում տեղի ունեցող շարունակական բարեփոխումներին և ռազմաքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխություններին, շվեյցարական զինված ուժերը պահպանում է իր ավանդական աշխարհագրային կառուցվածքը: Այն, արտաքին ուղղակի ռազմական սպառնալիքների բացակայության պայմաններում, մնում է Շվեյցարիայի Համադաշնության անվտանգության հիմնական երաշխիքը՝ դրանով հանդերձ կենտրոնանալով այնպիսի առաքելությունների վրա, ինչպիսին է ահաբեկչական հարձակումների, համաճարակների կամ բնական աղետների դեպքում քաղաքացիներին օգնությունը: Բացի այդ, բանակում ծառայելը սոցիալական և հասարակական կարևոր արժեք է: Շվեյցարիայում բանակը շարունակում է մնալ հասարակության ներմիասնացման հիմնական տարրերից մեկը:

Միաժամանակ, Շվեյցարիայում շարունակվում են քննարկումներն այն մասին, թե արդյոք պետք է հրաժարվել մեծաքանակ պահեստազորից և անցնել զինված ուժերի կամավոր կադրային համակարգին: Այս հարցի վերաբերյալ 1991 թ. ի վեր Շվեյցարիայում երեք համընդհանուր հանրաքվե է անցկացվել, սակայն շվեյցարական քաղաքացիների ավելի քան 70 %-ը ընդհանուր զորակոչի պահպանման կողմնակից է՝ չնայած այն հանգամանքին, որ ներկայումս ծառայում է զինապարտների ոչ ավելի, քան 40 % -ը:

Վերջին տարիներին, Եվրոպայում և աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում, Շվեյցարիայի կառավարությունն ու հասարակական միտքն ավելի են հակվում դեպի ԵՄ ինտեգրումը և չեզոքության սկզբունքի ավելի ձկուն մեկնաբանությանը: Դրանք ներառում են ազգային անվտանգության պահպանումը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատժամիջոցների ռեժիմին միանալու իրենց կարգավիճակի մշակումը և Եվրամիության հետ համագործակցությունը: Իր ազգային արտաքին քաղաքականության խնդիրներին համահունչ՝ Շվեյցարիան աստիճանաբար մեծացնում է սպառազինության ու զինաթափման հետ առնչվող մարմիններում իր մասնակցությունը և միջազգային խաղաղապահ առաքելություններին քաղաքացիական և զինվորական կադրեր է տրամադրում, այդ թվում՝ դիտորդներ ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի համար:

Ավելին՝ 1996 թ-ից ի վեր Շվեյցարիան մասնակցում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳԽԽ) ծրագրին: Սկզբունքորեն դա առնչվում է բալկանյան ձգնաժամի լուծման՝ ՆԱՏՕ-ի նոր դերին, քանի որ այս տարածաշրջանը սահմանակից է Շվեյցարիային և կարող է իրենից պոտենցիալ վտանգ ներկայացնել:

Այդուհանդերձ, Շվեյցարիան ՆԱՏՕ-ի անդամ երբևէ դառնալու մտադրություն չունի, քանի որ դա հակասում է իր չմիավորվելու կարգավիճակին և ռազմական չեզոքության սկզբունքին: Ուստի նրա մասնակցությունը ԳԽԽ-ում սահմանափակվում է մարդասիրական ջանքերով, խաղաղապահ գործողություններով, մարդասիրական օգնությամբ և բժիշկների ուսուցմամբ: Ցանկացած զինված գործողությունում գործառնների մասնակցությունն արգելվում է:

Այսպիսով՝ Շվեյցարիայի չեզոքության քաղաքականությունը ներկայումս գտնվում է անցումային փուլում՝ ինքնամեկուսացման և ազգային շահերի պաշտպանության մեխանիզմից դեպի ակտիվ արտաքին քաղաքականության գործիքները: Չնայած բազմաթիվ քննադատություններին՝ Շվեյցարիայի մշտական չեզոքությունը ներուժի հզոր պաշարներ ունի և, ամենայն հավանականությամբ, դեռ երկար ժամանակ կմնա այդպիսին: Դրան համապատասխան՝ ազգային զինված ուժերը աշխարհագրով համալրելու սկզբունքը կպահպանվի նաև տեսանելի ապագայում:

Ֆինլանդիա

Ֆինլանդիայի զինված ուժերը ստեղծվել է 1918 թ-ին, երբ Ռուսական կայսրությունում տեղի ունեցած հեղափոխությանը հետևելով՝ Ֆինլանդիան հռչակեց իր անկախությունը, և որի համար հետագայում նա ստիպված էր պայքարել: Բոլշևիկյան Ռուսաստանի հետ անհամեմատելի տարածքների և աշխատուժի, ինչպես նաև շուրջ 1000 կմ երկարությամբ սահմանի պայմաններում այդ փոքր Ֆինլանդիան իր բոլոր ջանքերը նվիրեց արևելքից եկող սպառնալիքներից պաշտպանվելու նպատակին: Լավ օգտագործելով իր աշխարհագրությունը և մինչև 1920-ականների վերջն ընկած ժամանակահատվածում հզոր պաշտպանական ամրությունների ցանցի շինարարության միջոցով Ֆինլանդիան քիչ թե շատ պատրաստ էր ԽՍՀՄ-ի դեմ Չմեռային պատերազմին: Չնայած այդ պատերազմում կրած պարտությանը և որոշ տարածքների ու շատ մարտիկների կորստին՝ Ֆինլանդիան պահպանեց իր անկախությունը:

Որպես 2-րդ համաշխարհային պատերազմում պարտված երկրներից մեկի՝ Ֆինլանդիայի նկատմամբ կիրառվում էին 1947 թ. Փարիզի Խաղաղության պայմանագրերի դրույթները, որոնք բազմաթիվ ռազմական սահմանափակումներ էին սահմանում: Քանի որ Ֆինլանդիայի տարածքում ներկա էին միայն խորհրդային զորքերը, ապա ցանկացած հետագա զարգացում հիմնվում էր ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների վրա: Բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին 1948 թ. ապրիլին կնքված պայմանագիրն ընդգծեց «Ֆինլանդիայի ցանկությունը՝ դուրս մնալ գերտերությունների հակամարտող շահերից, և արտահայտեց Միավորված ազգերի կազմակերպության նպատակների և սկզբունքների պահպանմանը համապատասխան՝ միջազգային խաղաղության և անվտանգության ուղղությամբ համագործակցելու երկրի հաստատուն ձգտումը»:

Բացի այդ, Ֆինլանդիան պարտավորություն վերցրեց իր տարածքի վրա կամ դրա միջով ԽՍՀՄ տարածքի վրա ռազմական հարձակման դեպքում օգտագործել իրեն պաշտպանելու բոլոր միջոցները և, անհրաժեշտության դեպքում՝ փոխադարձ համաձայնությամբ, Խորհրդային Միությունից օգնություն խնդրել: Այդ պայմանագրում Ֆինլանդիայի չեզոքությունը հստակորեն չէր նշվում, սակայն դա դե ֆակտո ճանաչվում էր ԽՍՀՄ-ի կողմից: Այն «կապված ձեռքերի» կարգավիճակը, որում հայտնվեց Ֆինլանդիան, արևմտյան դիվանագիտական ժարգոնում հայտնի դարձավ որպես «ֆինլանդացում»:

Ինչպես նշվեց, 1947 թ. Փարիզի Խաղաղության պայմանագրերը սահմանափակել էին Ֆինլանդիայի պաշտպանության ուժերի չափը՝ դրանք հասցնելով մինչև պաշտպանության նվազագույն կարիքներին: Սահմանափակվել էին նաև խաղաղ պայմաններում զինված ուժերի

որոշակի քանակական և որակական չափանիշները: Այսպես, զինված ուժերի ընդհանուր թվաքանակը չէր կարող գերազանցել 41,9 հազարը, այդ թվում՝ 34,4 հազար ցամաքային ուժերը, 3 հազար ռազմաօդային ուժերը (60 մարտական ինքնաթիռ) և 4,5 հազար ռազմական նավատորմը (նավատորմի ընդհանուր ջրատարողությունը չպետք է գերազանցեր 10 հազար տոննան): Արգելել էին միջուկային զենքը, ռեակտիվ ռմբակոծիչները, կառավարվող հրթիռները և տորպեդները, սուզանավերն ու տորպեդակիր մոտորանավակները: Այդ պայմանագրերի որոշ դրույթներ հետագայում փոփոխվեցին: 1963 թ-ին Ֆինլանդիային թույլատրվեց պաշտպանության նպատակների համար կառավարվող հրթիռային սպառազինություն ձեռք բերել (նավից՝ նավ և երկրից՝ օդ հրթիռներ, ինչպես նաև հակատանկային հրթիռային համակարգեր): Ֆինլանդիայի խորհրդարանը 1990 թվականին չեղյալ հայտարարեց պայմանագրերի այն դրույթները, որոնցով սահմանափակված են զինված ուժերի թվաքանակը և սպառազինությունների արգելքը՝ բացառությամբ միջուկային զենքի:

Վաղ 1960-ականներին Ֆինլանդիան ընդունեց պարտիզանական պատերազմի դեպքում տարածքային պաշտպանության հայեցակարգը: Ֆինլանդիան բաժանվեց յոթ զինվորական շրջանների, որոնցից յուրաքանչյուրը պետք է կարողանար ինքնուրույն հետ մղել ագրեսորին: Այդ համակարգը հիմնված էր 2-րդ համաշխարհային պատերազմի փորձի վրա, իսկ գիտելիքներն ընդօրինակվել էին երրորդ աշխարհի երկրների ազատագրական պատերազմներից: Միևնույն ժամանակ, տարածքային պաշտպանության առաջնային, չնայած չբարձրաձայնած, նպատակը խորհրդային ներխուժման փորձերը խանգարելն էր:

Տասնամյակներ շարունակ Ֆինլանդիայի պաշտպանական քաղաքականությունն անփոփոխ էր մնացել: Չնչին փոփոխությունները ոչ մի էական ազդեցություն չունեցան չեզոքության հայեցակարգի վրա, որը Ֆինլանդիայի արտաքին քաղաքականության անկյունաքարն էր: Ֆինլանդիայի պաշտպանական քաղաքականության հիմնական առանձնահատկությունը պայմանավորված էր երկրի համապարփակ տարածքային պաշտպանության համակարգով, ընդհանուր զորակոչով և իր ինքնիշխան ողջ տարածքի պահպանությամբ: Տարածքային պաշտպանության առաջնային խնդիրն էր պահպանել փոքր զորամասերի մարտավիճակը, որոնց առաքելությունն էր պաշտպանել հիմնական օբյեկտները և կանխել ագրեսորի մուտքը Ֆինլանդիայի որոշ նշված տարածքներ: Այս զորամասերը պետք է նաև աջակցեին տեղական կառավարման մարմիններին՝ պաշտպանելու կենսական նշանակության սոցիալական ենթակառուցվածքները: Ֆիննական զինված ուժերն իր ջանքերի մեծ մասը նվիրում էր շարժուն (մարտավարական) ուժերի ուսուցմանը, որոնք պետք է տեղաբաշխվեին երկրի ողջ տարածքում: Այս շարժուն ուժերի առաքելությունն էր հակահարված տալ հարձակումներին և զորքերի համատեղ գործողությունների միջոցով պարտության մատնել հակառակորդին:

Ֆինլանդիան 1960-1980-ականներին իր 5 միլիոն բնակչությամբ կարողացավ հակահարված տալ խորհրդային Միության 500 հազարանոց հզոր ռազմական խմբավորմանը՝ կռվելով պաշտպանության համար նախապատրաստված տեղանքում: Պաշտպանական համակարգը կազմված էր ռազմական գործողությունների հարավային ուղղությամբ գտնվող խիստ ամրացված Սալվայի գծից, կենտրոնական ուղղությամբ՝ պաշտպանության համար նախապատրաստված լճերի լայն համակարգից, գործողությունների հյուսիսային ուղղությամբ՝ կտրտված ռելիեֆից, որտեղ խորհրդային կողմի տրանսպորտային ամբողջ ցանցը միայն հինգ ճանապարհ ուներ: Ֆիննական ծոցի ամբողջ երկայնքով ականապատված գոտիների և ափամերձ ամրությունների մի հզոր համակարգ էր ստեղծվել: Տարածքային պաշտպանության այս բոլոր տարրերը մինչ այսօր պահպանվել են ինչ-որ վիճակում կամ ձևով:

Սառը պատերազմի ավարտից հետո Ֆինլանդիայի ազգային անվտանգության համակարգի գլխավոր փոփոխությունները հիմնականում ազդեց են երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների վրա: Միևնույն ժամանակ, ազգային անվտանգության զարգացման համակարգը չենթարկվեց զգալի փոփոխությունների: Զինվորական հրամանատարության մարմինները և տարածքային կառույցները օպտիմալացվեցին, իսկ պատերազմական վիճակի գինված ուժերի ընդհանուր թվաքանակը պահպանվեց համեմատաբար բարձր մակարդակի վրա՝ 450 հազար մարդ: Համապարփակ տարածքային պաշտպանության համակարգը, ընդհանուր զինակոչը և ինքնիշխան ողջ տարածքի պաշտպանությունը մնացին որպես Ֆինլանդիայի պաշտպանության քաղաքականության առանցքային բաղադրիչը:

Ֆինլանդիայի տարածքային պաշտպանությունը հիմնված է երկրի ներսում մարտական գործողություններ վարելու վրա: Դրա հիմնական նպատակն է պահել թշնամու առաջխաղացումը զսպելու համար հատուկ նախապատրաստված ռազմավարական կարևորությամբ տարածքները, թշնամուն առավելագույն կորուստներ հասցնել և օպտիմալ պայմաններ ստեղծել ճիշտ տեղում և լավագույն ժամանակում նրան պարտության մատնելու համար: Հաշվի առնելով Ֆինլանդիայի աշխարհագրությունը և այլ գործոններ՝ ագրեսիայի հետմղման հիմնական դերը հատկացվում է ցամաքային ուժերին, որոնք դիվերսիոն և պարտիզանական գործողությունների լավ վերապատրաստում են անցնում: Ֆինլանդիայի համապարփակ պաշտպանության համակարգի էությունն այն է, որ ազգային պաշտպանությունը ներառում է ոչ միայն ռազմական պաշտպանությունը, այլ նաև արտակարգ իրավիճակներում տնտեսական պաշտպանությունը, քաղաքացիական պաշտպանությունը, տեղեկատվական ոլորտը, սոցիալական ապահովությունը և բուժօգնությունը, հեռահաղորդակցությունը և հասարակական կարգի պահպանությունը:

Բացի երկրի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը պաշտպանելու, խաղաղապահ առաքելություններին մասնակցելու և այլ ավանդական ռազմական առաջադրանքներից՝ Ֆինլանդիայի պաշտպանության ուժերը նաև ներքին առաջադրանքներ ունեն: Օրենքով նախատեսված դեպքերում նրանք պետք է մասնակցեն որոնողական և փրկարարական աշխատանքներին և աջակցեն երկրում օրենքի և կարգի պահպանմանը:

Եվրամիությանը 1995 թ-ին անդամակցելը Ֆինլանդիան դիտարկում է որպես արտաքին քաղաքականության, անվտանգության և տնտեսության առումով իր հիմնարար ընտրությունը: Հարկ է նշել, որ այս ընտրությունը կատարելուց հետո պաշտոնական երկխոսությունից վերացավ «չեզոքություն» բառը, որը փոխարինվեց այն հայտարարությամբ, որ «Ֆինլանդիան չի միանա որևէ ռազմական դաշինքի», որն իր հերթին, Լիսաբոնի ԵՄ համաձայնագրից հետո, փոխվեց՝ «Ֆինլանդիան որևէ ռազմական դաշինքի անդամ չէ»:

Սկսած 1994 թ-ից՝ էապես փոխվեցին նաև ՆԱՏՕ-ի հետ Ֆինլանդիայի հարաբերությունները, երբ Ֆինլանդիան միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Այստեղ ամենանշանակալին այն էր, որ Ֆինլանդիան մասնակցեց ՆԱՏՕ-ի ղեկավարած՝ ձգնաժամային կառավարման գործողություններին: Զգտելով մոտենալու ՆԱՏՕ-ի չափանիշներին և իր ազգային պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով Ֆինլանդիան, 1990-ականներից ի վեր, բանակի նյութատեխնիկական ապահովման ոլորտում համագործակցում է Դաշինքի հետ և օգտվում է Պլանավորման ու վերանայման գործընթացից (PARP) և իր սեփական Գործընկերության նպատակներից (ԳՆ -PG):

Հարկ է նշել, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության զարգացումը և ընդլայնումը չէին պարտադրվել Ֆինլանդիայի մի քանի առանձին կուսակցությունների կողմից, այլ աջակցություն էին ստացել ֆիննական քաղաքական լայն ուժերի կողմից: Սա ՆԱՏՕ-ի հետ համագործակցության գործընթացում ներգրավված բազմաթիվ գերատեսչություններին և նախարարություններին հնարավորություն տվեց իրենց պլանները կազմել ավելի երկար ժամկետների համար և կայունության պայմաններում:

Այնուամենայնիվ, չնայած ընդլայնված համագործակցությանը՝ ՆԱՏՕ-ին Ֆինլանդիայի անդամակցելու հարցը դեռ օրակարգում չէ: Դրա առաջին պատճառը կապված է Ռուսաստանի դիրքորոշման հետ: Մոսկվան հստակորեն հասկացրել է, որ չի խրախուսում այդ Դաշինքին Ֆինլանդիայի անդամակցությունը, և որ նման քայլը կարող է ծանր հետևանքների հանգեցնել:

Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի 2008 թ-ի ագրեսիան Ֆինլանդիան դիտարկեց որպես պոտենցիալ ռազմական սպառնալիք հենց իր դեմ: Այս տեսակետն արտացոլվեց երկրի պաշտպանության պլանավորման փաստաթղթերում: Մասնավորապես, դրանք ընդգծում էին, որ Ֆինլանդիան, լինելով անկախ երկիր, չի կարող ապավինել միայն քաղաքական բանակցություններին և, անհրաժեշտության դեպքում, պետք է ագրեսորի հարձակմանը արժանի հակահարված տալու համար իրական ներուժ ունենա: Դրան հասնելու համար անհրաժեշտ էր պահպանել տարածքային համապարփակ պաշտպանության և ընդհանուր զորակոչի համակարգը: Պատերազմի դեպքում հասարակության բոլոր տնտեսական և այլ ռեսուրսները պետք է մոբիլիզացվեն հանուն Ֆինլանդիայի պաշտպանության: (Դեռ 2006 թ-ին Ֆինլանդիան ընդունել էր «Պատերազմական պայմաններում Ֆինլանդիայի պետության կենսունակության պահպանման ծրագիր»-ը):

Միևնույն ժամանակ, որոշում էր կայացվել աստիճանաբար նվազեցնել պատերազմական պայմաններում զինված ուժերի թվաքանակը՝ 450 հազարից մինչև 350 հազար և ապա՝ 230 հազար, և շեշտը դնել տեխնիկական վերազինման վրա: Նոր կառույցը կոչված է բարելավելու տեղական ինքնապաշտպանության կարողությունները:

Խաղաղ պայմաններում զինված ուժերի թվաքանակը համեմատաբար ցածր է՝ ընդամենը 12,5 հազար մարդ՝ ներառյալ քաղաքացիական անձնակազմը: Անմիջապես ուսուցման մեջ գտնվող զինապարտների և պահեստազորայինների հետ միասին այդ թիվը հասնում է 20-22 հազարի: Շվեյցարիայի մոդելի նման, խաղաղ պայմաններում զինված ուժերի կառուցվածքը հիմնականում ուղղված է պահեստազորի շարունակական զինավարժություններին և վերապատրաստմանը:

Այսօրվա դրությամբ ցամաքային զորքերը կազմած են չորս *Jaeger* (մեխանիզացված) բրիգադից, մեկ տանկային և մեկ հրետանային բրիգադից, վեց հետևակային բրիգադից, երկու *Jaeger* գնդից, թիկունքի զորամասերից և այլն: Խաղաղ ժամանակ բոլոր բրիգադները համալրված են 30 %-ով և հիմնականում զբաղվում են ուսումնական վարժանքով: Զորահավաքի ժամանակ դրանք պահեստազորի միջոցով համալրված են 100 %-ով: Զորահավաքի ժամանակ գրեթե զրոյից վեց հետևակային բրիգադ է տեղաբաշխվում: Վերոհիշյալ զորամասերը հիմնականում ցամաքային զորքերի մարտավարական բաղադրիչներն են, որոնք նախատեսված են հարձակողական գործողություններից պաշտպանվելու համար, և պատերազմի ժամանակ դրանց ընդհանուր անձնական կազմը կարող է գերազանցել 60 հազարը: Ըստ զորահավաքային պլանների՝ պատերազմի ժամանակ զորամասերը պետք է տեղակայվեն 72 ժամվա ընթացքում: Ըստ գնահատականների՝ 230 հազար մարդուց կազմված ֆիննական զինված ուժերի տեղակայումը կարող է 1-ից 4 շաբաթ տևել:

Պաշտպանության համակարգի մեկ այլ բաղադրիչ էլ ֆիննական զինված ուժերի տարածքային զորքերն են, որոնք կազմված են տեղական պաշտպանության զորքերից և օժանդակ զորամասերից: Ենթադրվում է, որ տեղական պաշտպանության կազմավորումները պետք է գործեն իրենց պատասխանատվության տակ գտնվող տարածքում և ապահովեն կանոնավոր զորամասերի և խմբավորումների տեղակայումը: Նրանց առաջադրանքն է պաշտպանել խոշոր տրանսպորտային հանգույցները, օդանավակայանները, նավահանգիստները, կարևոր ռազմական, պետական և արդյունաբերական օբյեկտները և թիկունքում հետ մղել օդային և ծովային հարվածները: Տեղական պաշտպանության զորքերը կազմված են գումարտակներից, վաշտերից և դիվիզիաներից: Թշնամու՝ դեպի երկրի խորքերն առաջնալու դեպքում այդ զորամասերը պարտիզանական ջոկատներ են կազմում, որոնց հիմնական խնդիրներն են հետախուզական գործողություններ ծավալել և դիվերսիոն հարձակումներ կատարել թշնամու կապի, ռազմական հրամանատարության համակարգերի, օժանդակ գծերի և այլնի վրա: Կանոնավոր զորքերի հետ համատեղ գործելու դեպքում տեղական պաշտպանության ստորաբաժանումները մտնում են դրանց կազմի մեջ:

Տեղական պաշտպանության զորքերը համալրվում են ավելի տարիքով (35 տարեկան և ավելի) զորակոչված անձանցով և զինված են հնացած զենքով և հանդերձանքով, սակայն նրանք կոնկրետ տարածքներում գործելու լավ պատրաստվածություն ունեն և միշտ պատրաստ են արագ զորահավաքի՝ 1-2 օրվա ընթացքում: Տարածքային պաշտպանության զորքերի տեղակայումը ղեկավարում են պահեստագործի հարցերով զբաղվող (համագործ է զինկոմիսարիատներին) 12 շրջանային վարչությունները, որոնք խաղաղ ժամանակ ապահովում են զորահավաքի պատրաստվածությունը:

Օժանդակ զորամասերը (խմբերը) ամբողջությամբ ապահովում են մարտավարական զորքերի և տեղական պաշտպանության կազմավորումների թիկունքի նյութատեխնիկական մատակարարումը: Դրանց մեջ են մտնում ռազմական աջակցության (ՄԿԶ/միջուկային, կենսաբանական, քիմիական/ պաշտպանություն և շինարարություն), նյութատեխնիկական ապահովման, ռազմական ոստիկանության և երկաթուղային զորքերը: Այս զորամասերը համալրված են համապատասխան մասնագետներով և զինվորական ծառայության համար սահմանափակ պիտանիությամբ անձանցով:

Հարկ է նշել, որ Ֆինլանդիայի օդուժը, մյուս չեզոք եվրոպական երկրների նման (օրինակ՝ Ավստրիա և Շվեյցարիա), կազմված է միշտ պատրաստ զորամասերից, որոնք զորահավաքի դեպքում լրացվում են փոքրաքանակ օժանդակ անձնակազմով: Ընդ որում, զորահավաքի ժամանակ ռազմածովային նավատորմում տեղակայվում են ավիամերձ պաշտպանության բրիգադը (խաղաղ ժամանակ համալրված է 30 %-ով) և նավերի անձնակազմը (խաղաղ ժամանակ համալրված է 50 %-ով):

Զինված ուժերը համալրվում են ըստ զինապարտության մասին օրենքի: Զինակոչային տարիքը 18-ից 30 տարեկանն է, իսկ ծառայության ժամկետը՝ 6, 9 և 12 ամիս՝ կախված զինվորական մասնագիտությունից: Պահեստային սպաները, սերժանտները և տեխնիկական մասնագետները (օրինակ՝ տանկիստները) 12-ամսյա վարժանք են անցնում: Մասնագիտացված ուսուցում պահանջող որոշակի այլ կատեգորիաների համար ծառայության ժամկետը 9 ամիս է, իսկ մնացածը, որին բաժին է ընկնում ընդհանուր անձնական կազմի մոտ կեսը, ծառայում է 6 ամիս:

Ամեն տարի զինված ուժերում հիմնական զինվորական պատրաստություն է անցնում մոտ 20-21 հազար նորակոչիկ: Այդ թիվը նախկինում՝ վերջին տասը տարվա

ընթացքում, 30-հազար էր, որի նվազումը հիմնականում պայմանավորված է Ֆինլանդիայի ժողովրդագրական խնդիրներով: 18-ից մինչև 60 տարեկան բոլոր առողջ տղամարդիկ ենթակա են զինակոչի Ֆինլանդիայի բանակ: Կանայք նույնպես կարող են ծառայել, եթե նրանք ցանկանում են և պիտանի են ծառայության համար:

Երիտասարդ տղամարդիկ կարող են ձեռնպահ մնալ կանոնավոր ծառայությունից հարգելի պատճառներով (օրինակ՝ կրոնական համոզմունքների համար) և քաղաքացիական (այլընտրանքային) ծառայության անցնել՝ լրիվ դրույքով աշխատելով հիվանդանոցներում, ծերանոցներում և սոցիալական տարբեր ծառայություններում: Նման ծառայության ժամկետն ավելի երկար է՝ 400 օր: Այնուամենայնիվ, այլընտրանքային ծառայություն ընտրած անձանց թիվը ցածր է, քանի որ Ֆինլանդիայում զինվորական ծառայությունը հեղինակավոր գործ է համարվում, և ենթադրվում է, որ դա «յուրաքանչյուր իսկական տղամարդու պարտքն ու պարտականությունն է»:

Զինվորական ծառայությունը, իրոք, շատ հեղինակավոր գործ է: Զինակոչի ժամանակ քննություններին մասնակցում է զինակոչի տարիքի անձանց ավելի քան 98 %-ը, այդ թվում՝ արտերկրում բնակվող քաղաքացիները: Ֆինլանդիայի երիտասարդ տղամարդկանց մինչև 10 %-ը սովորաբար համարվում է ծառայության համար ոչ պիտանի, սակայն առողջական խնդիրներ ունեցողները, եթե ցանկանում են, կարող են ծառայել օժանդակ զորամասում:

Բանակից խուսափելու դեպքերը չափազանց հազվադեպ են: Ֆինլանդիայի հասարակության մեջ ամոթալի է համարվում խոստովանել, որ բանակում չեն ծառայել: Այս փաստը կարող է կարիերայի խնդիրներ առաջացնել նույնիսկ բանկային աշխատողի կամ գիտնականի համար, քաղաքական գործիչներին էլ չհաշված: Ֆինն տղամարդկանց 80 %-ը ծառայել է բանակում, և հիմնական վաշտերի հրամանատարներից շատերը պահեստագորայիններ են: Կանոնավոր բանակում ծառայությունը շատ արտոնությունների հնարավորություններ է ընձեռում, ինչպիսիք են՝ բուհ ընդունվելու արտոնյալ պայմանները, դրամական նպաստները, արձակուրդները և այլն:

Կանոնավոր բանակում ծառայելուց հետո բոլոր զինծառայողները համալրում են պահեստագործի շարքերը: Ի տարբերություն Ավստրիայի և Շվեյցարիայի՝ ֆիննական պահեստագորայինն իր տանը գենք կամ հանդերձանք չի պահում: Համաձայն գործող կանոնների՝ զորահավաքի դեպքում պահեստագորայինն իր հետ բերում է միայն փաստաթղթերը և սմարթֆոնը, իսկ մնացածը բանակն է տրամադրում:

Զորահավաքային ռեսուրսների պատշաճ պահպանումը միշտ էլ կարևոր օրակարգային հարց է եղել: Բոլոր կատեգորիաների պահեստագործը պարբերաբար ուսումնական վարժանք է անցնում: Հինգ տարին մեկ նրանք մասնակցում են վարժանքներին՝ լրիվ կազմով համալրված զինվորական զորամասերում: Ըստ օրենքի՝ ցանկացած ժամկետային ծառայող պետք է գրեթե ամեն տարի վերապատրաստում անցնի, իսկ պահեստագորայինը վերապատրաստման է կանչվում երկու կամ երեք տարին մեկ անգամ: 2-3 շաբաթ տևող դասընթացը սովորաբար կազմված է զորավարություններից, որին ամեն տարի մասնակցում է մինչև 25 հազար պահեստագորային:

Պաշտպանության նախարարության անունից գործող Ֆինլանդիայի ազգային պաշտպանության ուսումնական միությունը (NDTAF) այսօր մեծ դեր է խաղում պահեստագորայինների վերապատրաստման գործում: Սա որոշակիորեն թեթևացնում է զինված ուժերի կառույցների բեռը: Ի լրումն վերը նշված թվերի՝ ամեն տարի միջին հաշվով մինչև 16 հազար պահեստագորային վերապատրաստվում է NDTAF-ի ռազմակայանում:

Ըստ Ֆինլանդիայի համապարփակ պաշտպանության դոկտրինի՝ բոլոր քաղաքացիները պարտավոր են աջակցել զինված ուժերին: NDTAF-ի ստեղծման նպատակն է քաղաքացիական բնակչությանը նախապատրաստել հնարավոր ռազմական իրավիճակներին: Դա անկախ քաղաքացիական միություն է, որը սերտորեն համագործակցում է պաշտպանության նախարարության հետ և նպատակ ունի աջակցելու զինպատրաստության գործին: NDTAF-ը հիմնադրվել է 1993 թ-ին և այդ օրվանից ի վեր շուրջ 700 հազար Ֆինլանդիայի քաղաքացիների է վերապատրաստել: NDTAF-ը կանոնավոր վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում 15 և ավելի տարեկան քաղաքացիական անձանց համար: Այն ռազմական ուսուցման մի քանի ուղղություններ է առաջարկում՝ ընդհանուր զինպատրաստություն, մասնագիտական ուսուցում և հրամանատարական դասընթացներ:

Միության գործունեությունը կարգավորվում է առանձին օրենքով, որտեղ նշվում է, որ NDTAF-ը կամավոր զինպատրաստություն է առաջարկում և Ֆինլանդիայի քաղաքացիներին տեղեկացնում է ազգային պաշտպանությանն իրենց պոտենցիալ մասնակցության մասին: Միության մեջ կանանց դերը կարևոր է, որտեղ նրանք վերապատրաստվում են տղամարդկանց հետ հավասար պայմաններում: NDTAF-ը մասնաճյուղեր ունի Ֆինլանդիայի բոլոր վարչական շրջաններում: Դրա մեջ նաև բազմաթիվ կազմակերպություններ են մտնում, ինչպիսիք են Որսորդների միությունը կամ Կանանց պաշտպանության լիգան, որոնք նույնպես գիտեն, թե պատերազմի դեպքում ինչ պետք է անել:

Միությունը դեկավարում են բանակի պահեստի սպաները, ովքեր էլ կազմում են ռազմական ուսուցման պլանը: Ֆինլանդիայի պաշտպանության նախարարությունը, որը համակարգում է NDTAF-ի գործունեությունը, միությանը շենքային տարածքներ, վարժանքների դաշտեր, սարքավորումներ, զենք ու զինամթերք է տրամադրում Հելսինկիի Սանտահամինա ռազմակայանում:

Ընդհանուր զորակոչի հիման վրա բանակի ուսուցման շատ արդյունավետ համակարգի և հստակ զորահավաքային պլանների շնորհիվ՝ Ֆինլանդիայի բանակի զորահավաքային պատրաստությունը, ընդհանուր առմամբ, համեմատաբար բարձր է գնահատվում:

Ավանդաբար մեծ ուշադրություն է դարձվում պահեստազորի հրամանատարական՝ հատկապես սպայական կորպուսի վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման վրա, քանի որ պատերազմի ժամանակ դա բանակի ողնաշարն է հանդիսանում:

Ապագա ենթասպաներն ընտրվում են կամավորներից՝ հաշվի առնելով յուրաքանչյուր թեկնածուի կրթության և անհատական առանձնահատկությունները: Նախնական փուլում ենթասպաները մասնակցում են 1-ին մակարդակի սպայական դպրոցների յոթշաբաթյա ընդհանուր հրամանատարական վերապատրաստման դասընթացին: Դրանից հետո նրանցից ոմանք իրենց ուսումը շարունակում են 2-րդ մակարդակի սպայական դպրոցներում (9 շաբաթ), իսկ մյուսները՝ պահեստազորի սպայական դասընթաց են անցնում (14 շաբաթ):

Ուսումն ավարտելուց հետո սպաներն ու ենթասպաները համապատասխան պաշտոնում 23-28 շաբաթ ծառայում են վերապատրաստման զորամասերում և ևս 9 շաբաթ՝ զորամասերում:

Ենթասպաների և կրտսեր սպայական կազմի միջնակարգ ռազմական ուսուցումը խրախուսելու համար զորքի յուրաքանչյուր տեսակ ուսումնարանի մակարդակի իր համապատասխան վերապատրաստման հաստատությունն ունի: Այդ ուսումնարանները,

ի լրումն կադրային զինծառայողների վերապատրաստման դասընթացի, պահեստազորի սպաներին առաջարկում են խորացված ուսուցում և վերապատրաստման դասընթացներ:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ այսօր Ֆինլանդիայի չեզոքությունը հարաբերականորեն ձևական բնույթ է կրում, ընդհանուր գորակոչի և զորահավաքին պատրաստ բազմաթիվ ռեսուրսների հիման վրա համապարփակ տարածքային պաշտպանության նրա դոկտրինը շարունակում է բավականին արդիական մնալ:

Սա Ֆինլանդիայի հիմնական տարբերությունն է նման ավանդաբար չեզոք երկրներից, ինչպիսիք են Ավստրիան և Շվեյցարիան: Այդ տարբերության հիմնական պատճառը Ռուսաստանից եկող հնարավոր ռազմական սպառնալիքն է, որը լեյսայն ընդունում է Ֆինլանդիայի կառավարությունը՝ հատկապես հաշվի առնելով 1340 կմ ֆինն-ռուսական ընդհանուր սահմանը:

Նույնիսկ Սառը պատերազմի ավարտից հետո Ֆինլանդիան իր ազգային պաշտպանության մոտեցման մեջ էական փոփոխություններ չի կատարել: Այստեղ առավել ակնառու գործոնը տեղակայված զինված ուժերի համալրմանը պատրաստ՝ լավ պատրաստված պահեստազորն է՝ նախկինում 450 հազար մարդ, իսկ այժմ նշված թիվը կրճատվել է մինչև 230 հազարը: Ընդ որում, դրան համարժեք քանակը Ավստրիայում կրճատվել էր 3,5 անգամ (200-ից՝ 55 հազար), իսկ Շվեյցարիայում աշխարհագրորդի համակարգը կրճատվել է 4,5 անգամ (650-ից՝ 150 հազար):

Ֆինլանդիան նաև ձեռնպահ է մնում իր ռազմական տեխնիկայի և ռազմական հզորության կտրուկ կրճատումից: Մինչև Ավստրիան և Շվեյցարիան վերջին 20 տարիների ընթացքում կրճատել են իրենց ցամաքային զորքերի հիմնական զինատեսակները՝ համապատասխանաբար 2,5 և 3,5 անգամ, Ֆինլանդիայում այն ընդամենը 1,3-1,5 անգամ է:

Միևնույն ժամանակ, Ֆինլանդիայի քաղաքացիները մեծ ընթերցումով են մոտենում իրենց ազգային պաշտպանությանը սպառնալիքներին և իրենց հայրենիքը պաշտպանելու պատրաստակամությանը: Ըստ Պաշտպանության տեղեկատվության Խորհրդատվական հանձնաժողովի կողմից անցկացված հարցման՝ Ֆինլանդիայի քաղաքացիների 78 %-ը կարծում է, որ Ֆինլանդիան կարող է ագրեսիայի թիրախ դառնալ: Տղամարդկանց 84 %-ը և կանանց 73 %-ը կարծում են, որ եթե պատերազմ սկսվի, ապա Ֆինլանդիան նույնիսկ անբարենպաստ պայմաններում պետք է կարողանա պաշտպանել ինքն իրեն: Մեծամասնությունը (87 %) պատրաստ է մասնակցելու հայրենիքի պաշտպանությանը: Հարցվողների 3/4-ը կարծում է, որ Ֆինլանդիան պետք է պահպանի ընդհանուր զորակոչի իր ներկայիս համակարգը:

Այն բանից հետո, երբ Ռուսաստանը ներխուժեց Ուկրաինա, Ֆինլանդիայի պաշտպանության նախարարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց իր զինված ուժերի, այդ թվում՝ զորահավաքային համակարգի և պահեստազորի պաշտպանական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ: Ամենամյա վերապատրաստման ենթակա պահեստազորայինների թվաքանակը 6 հազարից ավելացավ մինչև 18 հազարը: Ստուգվեց զորահավաքային ամբողջ ռեսուրսը (այս անգամ՝ ավելի քան 900 հազար մարդ), և ճշտվեցին դրա տվյալները: Վերջին տասնամյակում առաջին անգամ զորահավաքային ստուգման ենթարկվեցին անձնական կամ ընկերություններին պատկանող ամենագնաց ավտոմեքենաները: Պահեստազորի զորահավաքի գործընթացն արագացնելու, զինված ուժերի տեղակայման ծրագրերի հստակեցման և այլ նմանատիպ միջոցառումների նպատակով նաև օրենսդրական փոփոխություններ կատարվեցին:

2. Պահեստագործը հետխորհրդային տարածքում: Տեսություն և պրակտիկա

Պահեստագործի ստեղծման և 2008 թ.
մարտական գործողություններում դրա գործնական
կիրառման Վրաստանի փորձը

Եվրոպայի չեզոք երկրներում պահեստագործի ստեղծման փորձը ցույց է տալիս, թե ինչպես են համեմատաբար փոքր երկրները կարողանում իրենցից զգալիորեն ավելի հզոր թշնամու ներխուժումը կանխող պաշտպանական համակարգեր ստեղծել: Նման երկրների զինված ուժերի առավելությունը իրենց կարողությունների հստակ ըմբռնման և դրան առավել համապատասխանող պաշտպանական և ռազմական կառույցների զարգացման, քաղաքականությունների ընտրության գործոնն է: Միևնույն ժամանակ, Ավստրիայի, Շվեյցարիայի և Ֆինլանդիայի պահեստագործի մոդելները գործնականում ստուգման չեն ենթարկվել: Այդ իսկ պատճառով հետաքրքիր է ուսումնասիրել այլ երկրների պահեստային ուժերի կիրառման գործնական փորձը:

Դրանց շարքից է Վրաստանը, որն իր պահեստագործային համակարգը ստեղծել է ռուսական բանակին դիմակայելու համար: Վրացական համակարգը գործնականում փորձության է ենթարկվել 2008 թ. օգոստոսի 5-օրյա պատերազմի ժամանակ: Ընդհանուր առմամբ, Վրաստանի պահեստագործային համակարգն իր բացարձակ անարդյունավետությունը ցույց տվեց 2008 թ-ին: Այդուհանդերձ, դա չի խոսում այն մասին, որ դրա բոլոր հիմնարար սկզբունքները սխալ էին: Հետևաբար գործնական տեսակետից շատ հետաքրքիր է վերլուծել պահեստագործային համակարգի կառուցման՝ Վրաստանի ղեկավարության նպատակները, նրա թույլ տված սխալները և այն օբյեկտիվ գործոնները, որոնք վրացական պահեստագործին թույլ չտվեցին ազդել մարտական գործողությունների ընթացքի և արդյունքների վրա:

Ռուսաստանի դեմ պատերազմում պարտվելուց հետո Վրաստանի զինվորական և քաղաքական ղեկավարները փոխեցին պահեստագործային համակարգերի վերաբերյալ իրենց տեսակետը և, հաշվի առնելով ռազմական փորձը, վերանայեցին դրանք:

Այսպիսով՝ վերոհիշյալ վերանայման արդյունքում ստեղծված այդ նոր համակարգը պրագմատիկ տեսակետից նույնիսկ ավելի հետաքրքրաշարժ է:

Գործնականում Վրաստանի զինված ուժերում կազմակերպված պահեստագործի ստեղծումը սկսվել էր դեռ Մ. Սահակաշվիլու ժամանակ: Նախագահի պաշտոնին 2003 թ-ի վերջերին անցնելուց և 2004 թ-ի գարնանը աջարական ձգնաժամը հաջողությամբ լուծելուց հետո Վրաստանի նոր ղեկավարությունը փորձեց չճանաչված Հարավային Օսիային գրկել

իր հիմնական եկամտից՝ Ռուսաստանից դեպի Վրաստան գնացող մաքսանենգ առևտրից: Մաքսակետերի և էրզնետսկի շուկայի փակումը հանգեցրին վրացական ուժերի և օսեթական զինված խմբերի միջև զինված բախումներին:

Չնայած որ այդ մարտերը լայնածավալ չէին և գրեթե անիմաստ էին, դրանք ակնհայտորեն ընդգծեցին վրացական բանակի և արտգործնախարարության թուլությունը և անբավարարությունը: 2004 թ. մարտերի դադարից հետո կանոնավոր բանակը սկսեց բարելավել իր որակական և քանակական պարամետրերը՝ առաջին պահեստագործի ստեղծման ծրագրով հանդերձ:

Ըստ այդ ծրագրի՝ ազգային գվարդիան ուներ պահեստագործի 27 հետևակային գումարտակ, որոնք հիմնականում տեղակայված էին Ռուսաստանի հարևանությամբ գտնվող շրջաններում և Վրաստանի իշխանությունների կողմից անվերահսկելի՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի տարածքներում: Վրացական առաջին զօի կանոնավոր պահեստագործի գումարտակները կազմված էին 350 հոգուց: 2004 թվականի դեկտեմբերին զինպատրաստություն անցավ 7 գումարտակ, իսկ բոլոր 27 գումարտակները դա անցան 2006 թ-ին:

Պետք է խոստովանենք, որ վերոհիշյալ և հետագա ծրագրերում Վրաստանի ղեկավարները հիմնական շեշտը դնում էին ավելի շատ քանակական, քան որակական կողմերի վրա: Պահեստագործի ուսուցումը շատ թեմաներ էր ընդգրկում, սակայն այն բավականին կարճատև էր՝ ընդամենը 3 շաբաթ: Այնպես որ, Վրաստանի ազգային գվարդիայի պահեստագործը միայն հիմնական ուսուցում էր անցնում, և նրանց չէր կարելի փորձառու զինծառայողներ համարել, թեև թղթի վրա այդ 27 պահեստագործային գումարտակները շատ հզոր էին երևում՝ հատկապես վրացական բանակի ընդամենը 12 կանոնավոր հրաձգային գումարտակների համեմատ:

Այդ ուժերի որոշակի առանձնահատկություններից մեկն էլ կամավորությունն էր: Պահեստագործի պատրաստումը լայնորեն ճանաչված դարձնելու նպատակով բարձրաստիճան քաղաքական առաջնորդների հարազատները (նախագահի եղբայրը, պաշտպանության նախարարի եղբայրը և այլք) մասնակցեցին այդ ուսումնական վարժանքներին:

Բացի այդ, Վրաստանի կառավարությունը է. Շևարդնաձեի ռեժիմից ժառանգել էր «Մոնադիթե» (Որսորդ) կոչված մի կամավորական պահեստագործային ուժ, որը կազմված է Կոդորի կիրճի սվաններից (աբխազական Սվանետիա, «Վերին Աբխազիա»), և որը, ըստ էության, տեղական մաֆիայի պարագլուխ է. Կվիցիանիի անձնական բանակն էր: Վրաստանի բանակի և ներքին գործերի նախարարության կողմից Կոդորի կիրճում պետական արդյունավետ վերահսկողություն հաստատելուց հետո այդ ուժը 2006 թ-ին գրեթե վերացվեց:

Ազգային գվարդիայի 27 կամավորական գումարտակների ցանցի 2006 թ. ծրագրի ստեղծումից հետո Վրաստանի ղեկավարները ենթադրաբար որոշեցին, որ Ռուսաստանին հակադրվելու համար կամավորները բավարար չեն: Դա էր պատճառը, որ 2006 թ. դեկտեմբերի 26-ին Վրաստանի խորհրդարանն ընդունեց «Ձինվորական պահեստագործում ծառայության մասին» օրենքը, ըստ որի՝ զինվորական պահեստագործում ծառայությունը դարձավ պարտադիր և ոչ կամավոր, ինչպես նախկինում էր:

Այդ օրենքի ընդունումը պետք է միս և արյուն տար Մ. Սահակաշվիլու այն հայտարարությանը, որ արտաքին սպառնալիքից և, առաջին հերթին, Ռուսաստանից Վրաստանի «ընդհանուր պաշտպանության» համար 100 հազարանոց պահեստագործ է անհրաժեշտ:

Մինչև «Ջինվորական պահեստագործում ծառայության մասին» օրենքը Վրաստանում 27-ից 45 տարեկան 750 հազար մարդ կար: Ըստ նոր օրենքի՝ պահեստագործում 18-օրյա ծառայությունը պարտադիր էր 27-ից 40 տարեկան տղամարդկանց համար: Ուսանողները հատուկ կատեգորիա էին համարվում: Նրանց երկու (բացի պարտադիրից) լրացուցիչ 18-օրյա ուսումնաշրջանները որպես ժամկետային զինվորական ծառայություն էին համարվում:

27-ից 40 տարեկան քաղաքացիներն իրենց բնակության վայրում կամ ուսանողներն իրենց բուհերում պահեստագործային ծառայության կանչվեցին: Նման մոտեցումը հեշտացնում էր ինչպես զորակոչը և ծառայությունից խուսափողների դեմ պայքարը, այնպես էլ հնարավորություն էր տալիս հայրենակիցներից կամ նույն ինստիտուտի կամ ֆակուլտետի ուսանողներից կազմված ավելի սերտ մարտական խմբեր ստեղծել:

Ըստ նոր հայեցակարգի՝ Ազգային զվարդիան 4 վերապատրաստման կենտրոններ կազմակերպեց, որոնք պաշտպանության անհրաժեշտության դեպքում պետք է դառնային պահեստագործային բրիգադների տեղակայման ռազմակայանները: Այդ բրիգադները 6 հրաձգային գումարտակների հետ միասին (անցյալում 350-ի համեմատ՝ ավելի մեծաքանակ առաջին գծի կանոնավոր գումարտակներ՝ 500 զինծառայողներից կազմված) պետք է միանային շտաբին, հրետանային գումարտակին (հրետանային մարտկոցներին, հակաօդային պաշտպանության վաշտին և օժանդակ վաշտին): Բացի մարտական վաշտերից՝ հրաձգային գումարտակները և հրետանային դիվիզիաները նաև օժանդակ վաշտեր ունեին: Թիկունքի այդպիսի դիվերսիֆիկացումը պետք է ապահովեր բրիգադային միավորների ինքնավարությունը: Բացի հրաձգային բրիգադներից՝ նաև մի տանկային գումարտակ ստեղծվեց:

Ինչ վերաբերում է վրացական պահեստագործի հիմնական ուժերին՝ հրաձգային գումարտակին, ապա չնայած թվաքանակին (զորահավաքից հետո՝ 500 զինծառայող)՝ նրանց սպառազինությունը բավական թույլ էր: Բացի Կալաշնիկովի ինքնաձիգներից՝ գումարտակն ուներ նաև 12 Կալաշնիկովի գնդացիր և 12 RPG 7 նռնականետ: Անձնական կազմի հաստիքացանկը ավելի հզոր հակատանկային կամ ականանետ զենքի հնարավորություն չէր տալիս: Գումարտակների այդպիսի թույլ սպառազինությունը թիկունքի արդյունավետ պաշտպանության հույս էր ներշնչում, սակայն ռուսական բանակի հետևակային կամ դեսանտային գումարտակների հետ դեմ առ դեմ մարտերում վրացական պահեստագործը որևէ փրկություն չուներ:

Վրացական պահեստագործի երկրորդ ալիքը, առաջինի նման, խաղաղ պայմանների շատ աղքատիկ անձնական կազմ ուներ: Օրինակ՝ բրիգադի անձնակազմը նախքան զորահավաքը պետք է ունենար 50 սպա, 38 պայմանագրային զինվոր և 59 ժամկետային զինծառայող, ընդամենը՝ 147 զինծառայող: Ջորահավաքի դեպքում պահեստագործային բրիգադի կազմը մեծանալու էր մինչև 3532 զինծառայող, այդ թվում՝ 288 սպա: Բրիգադի նման ընդլայնված կազմի համար հրամանատարներ էին անհրաժեշտ, որոնք նույնիսկ կանոնավոր բանակի համար էին պակասում, որը նույնպես մեծանալու էր: Եկեք հիշենք, որ 2008 թ. պատերազմի ժամանակ վրացական կանոնավոր բանակի գումարտակների հրամանատարները հաճախ կապիտաններ էին: Իրավիճակը սրվել էր նաև նրանով, որ սպաների շրջանում զտումներ էին կատարվել, և դրա հետևանքով խորհրդային ռազմական ուսումնարաններից եկած բազմաթիվ սպաներ պաշտոնաթող էին արվել:

2008 թ. պատերազմում հրամանատարական կազմի պակասը Վրաստանի պահեստային ուժերի անարդյունավետության հիմնական գործոնը դարձավ: Նախքան

մարտական գործողություններ սկսելը հրամանատարական կազմի երեք աղբյուր էր նախատեսված՝ կանոնավոր բանակի սպաներ, պահեստի սպաներ և պահեստագործայիններ, ովքեր դասակի հրամանատարների դասընթաց էին անցել:

Մարտական գործողություններ սկսելուց հետո կանոնավոր բանակի սպաներից շատերին ուղարկեցին լրացնելու կանոնավոր զինված ուժերի շարքերը, և պահեստագործ մնաց առանց որակյալ հրամանատարության: Օրինակ՝ արևմտյան Վրաստանի պահեստագործի զորամասերից մեկը, որին հաջողվեց հավաքել Սինադի ռազմակայանում, ուներ 700 զինծառայող և ընդամենը մեկ կանոնավոր բանակի սպա:

Ինչ վերաբերում է մնացած երկու հրամանատարական կատեգորիաներին, ապա պահեստագործի այն սպաները, ովքեր տարբեր ժամանակների, այդ թվում՝ Խորհրդային Միությունում, և տարբեր տեսակի զինված ուժերում և զորատեսակներում զինվորական աստիճաններ էին ստացել, հրաձգային դասակների և վաշտերի հրամանատարական 18-օրյա դասընթացներ անցան: Անկասկած, նման կարճատև դասընթացը նրանց չէր կարող թույլ տալ արդյունավետորեն ղեկավարել իրենց զորամասը: Պահեստագործային կապրալից դասակի հրամանատար պատրաստելը պլանավորված էր իրականացնել 2008 թ-ին, սակայն ժամանակը բավարար չէր, որպեսզի դա որևէ ազդեցություն ունենար վրացական պահեստագործի հրամանատարների վերապատրաստման վրա:

Այսպիսով՝ մինչև 2008-ի օգոստոսյան մարտերի սկիզբը վրացական պահեստագործային համակարգը գրեթե զրկված էր հրամանատարներից, և եղածներն էլ պատշաճ որակավորում չունեին: Հենց դա էր այն առավել կարևոր գործոնը, որը բացատրում էր 2008 թ. իրական մարտական գործողությունների ժամանակ Վրաստանի պահեստագործային համակարգի անարդյունավետությունը:

«Զինվորական պահեստագործում ծառայության մասին» օրենքի համաձայն՝ 2007 թ. մարտի վերջին պահեստագործի զորակոչված առաջին հոսքը սկսեց իր ուսումնական վարժանքը: Այն իրականացվում էր երեք վայրերում, որոնք էին՝ Սենակի՝ արևմտյան Վրաստան (20-րդ կադրային բրիգադ), Մուխրոմանի՝ Թբիլիսիի մերձակայք (40-րդ կադրային բրիգադ), Թելավի՝ արևելյան Վրաստան (50-րդ կադրային բրիգադ): Յուրաքանչյուր ռազմակայանում ուսումնական վարժանքին մասնակցեց 500 մարդ (մեկ պահեստագործային գումարտակ): Հունիսից հետո (4-րդ հոսք) ծրագրին միացավ Կոջորի ռազմակայանը (10-րդ կադրային բրիգադ), և երկու գումարտակներ (մոտ հազար մարդ) միանգամից ուսումնական վարժանք անցան: Հինգերորդ հոսքից սկսած (հուլիսի 9-ից հետո)՝ Սենակի ռազմակայանում վարժանք անցան երկու գումարտակներ:

Հիմնական վերապատրաստման ծրագիրը տևեց 18 օր, որից՝ 1-ին օրը ժամանման և կազմակերպական հարցերի օրն էր, 4 օր նախատեսված էր զենքի օգտագործման վարժանքի համար, 8 օր տրված էր մարտավարությանը, 1 օր՝ ինժեներատեխնիկական վարժանքին, 1 օր կազմակերպվում էր գոյատևում և առաջին բուժօգնություն, 1 օր՝ հակառակորդի սպառնալիքություն և մարտավարություն, 1 օր՝ դաշտային վարժանք, և 1 օրը մեկնման օրն էր:

18-օրյա ուսումնաշրջանից հետո հրահանգիչների հանգստի և պահեստագործի նոր հոսքի ընդունմանը նախապատրաստվելու համար 7 օրվա դադար էր տրվում: Այդ համակարգը թույլ էր տալիս յուրաքանչյուր 25 օրը մեկ 1-2 նոր գումարտակ վարժել: Մի քանի ռազմակայան ունենալով՝ Վրաստանի ղեկավարությունը կարող էր, չճանաչված հանրապետությունների և Ռուսաստանի հետ հարաբերությունների սրման դեպքում, բնակչության մեծ մասին համամասնորեն զինպատրաստության ենթարկել:

Ըստ 2007 թ. պլանի՝ նախատեսված էր նշված 18-օրյա ծրագրով ուսումնական վարժանք անցկացնել 50 պահեստագորային գումարտակների հետ, և այդ պլանը կատարվեց: Դա թույլ տվեց ընդգրկել 25 հազար Վրաստանի քաղաքացու, որը մի քանի անգամ գերազանցում էր չճանաչված Աբխազիայի և Հարավային Օսիայի զինված ուժերի թվաքանակը: Ինչպես առաջին 27 գումարտակների դեպքում, ակնհայտ էր, որ վրացական ղեկավարությունը ցանկացել էր որակի բարելավման փոխարեն ավելացնել քանակը:

2008 թ-ին նախատեսվում էր պահեստագորայինների մասնագիտացման, ինչպես նաև առավել համապատասխանող պահեստագորայինների համար դասակի հրամանատարական դասընթացներ կազմակերպել: Բացի այդ, նախատեսվում էր 8-օրյա ծրագրի շրջանակներում 2007-ին ուսումնական վարժանք անցած գումարտակների վերապատրաստում կազմակերպել: Գումարտակների մի մասին հաջողվեց անցնել այդ ուսումնական վարժանքը, իսկ մնացածը դրա համար ժամանակ չունեին: Ընդհանուր հաշվով նույնիսկ 2 տարվա ընթացքում 26 օրը պահեստագորին բավարար չէ համապատասխան հմտություններ ձեռք բերելու համար:

Այդուհանդերձ, Վրաստանի պահեստագորային համակարգն իր առավելություններն ուներ, որոնք էին.

Նախ՝ քաղաքական առաջնորդների նպատակասլացությունը, ովքեր պահեստագորային համակարգը որպես իրենց քաղաքականության գործիք էին համարում:

Երկրորդ՝ լավ հրահանգիչները, այդ թվում՝ այն զինվորականները, ում ուսումնական վարժանքն իրականացվել էր Իրաքում և Աֆղանստանում մարտական գործողությունների փորձ ունեցող արևմտյան հրահանգիչների կողմից:

Երրորդ՝ այդպիսի կարճատև ուսումնական վարժանքի ժամանակ զենքի կիրառման և մարտավարության ուսուցման լավ մակարդակը:

Միևնույն ժամանակ, վերը թվարկված պատճառները վրացական պահեստագորային ուժերին թույլ չտվեցին որևէ նշանակալի ազդեցություն ունենալ 2008 թ. մարտական գործողությունների ընթացքի և արդյունքի վրա:

Մեծաքանակ պահեստագոր ունենալը շատ կարևոր էր համեմատաբար փոքր կանոնավոր բանակ ունեցող Վրաստանի համար, որը, նույնիսկ թվաքանակի աճի դեպքում, զգալիորեն զիջում էր Կովկասում տեղակայված ռուսական զորքերին, անգամ եթե հաշվի չառնվի ռուսական այլ շրջաններից եկող պահեստագորի հնարավոր տեղակայումը: Երեք հիմնական ուղղություններից (Աբխազիայի, Օսիայի և Հայաստանի) Ռուսաստանի հնարավոր ներխուժումն իրենց փոքր կանոնավոր բանակից պահանջվում է նվազագույն թվով կանոնավոր զինված ուժերի և ներգրավված պահեստագորի միջոցով դիմակայել դրանցից մեկին կամ երկուսին:

2008 թ-ի պատերազմն ապացուցեց, թե ճիշտ է ասված, որ Վրաստանի կանոնավոր բանակը բավարար չէ դիմակայելու այդ երեք վեկտորներից նույնիսկ երկուսին: Հարավային Օսիայի մարտական գործողություններին Ռուսաստանի ակտիվ միջամտությունը, ինչպես նաև Իրաքում տեղակայված առավել զինավարժ 1-ին հրաձգային բրիգադի բացակայությունը հենց առաջին օրը սրեցին Վրաստանի պաշտպանության համակարգի ձգնաժամը: Երկրորդ հրաձգային բրիգադը, որն արևմտյան Վրաստանի ուժերի կմախքն էր կազմում, տեղափոխվել էր Ցխինվալիի շրջան: Արդյունքում, հրամանատարներից գրեթե զրկված, վատ վարժված և զինված վրացական պահեստագորը ստիպված էր ընդդիմանալ արխազական կողմում դեսանտային զորամասերից ստեղծված ռուսական զորքերին:

Ջարմանալի չէ, որ այդ ուժերն անկարող էին ցանկացած ողջամիտ դիմադրություն ցույց տալ ռուսական զորքերին: Բացի այդ, արևմտյան Վրաստանում (բացառությամբ Քութայիսիի) պաշտպանության բացակայությունը ստիպեց նրան թողնել Կոդորի կիրճը՝ Վրաստան ներխուժման սպառնալիքի տակ:

Պետք է խոստովանենք, որ Ռուսաստանի դեմ մարտական գործողությունների վրա ազդելու Վրաստանի պահեստագործի անկարողությունը բացատրվում էր հակամարտության կարճատևությամբ: Պահեստագործին հրամայվել էր 72 ժամվա ընթացքում, այսինքն՝ 3 օրում ներկայանալ հավաքակայան, իսկ պատերազմը տևեց ընդամենը 5 օր: Այնուամենայնիվ, վրացիները կարողացան 30 հազարանոց պահեստագործ հավաքել: Սակայն եթե մարտական գործողությունները երկար տևեին, հատկապես խոշոր քաղաքներում (Թբիլիսի, Քութայիսի, Բաթում), ապա վրացական պահեստագործը կկարողանար ակտիվորեն մասնակցել դրանց՝ չնայած իր բոլոր թերություններին:

Վրաստանի պահեստագործային համակարգը չկարողացավ ընդունել 2008-ի մարտահրավերները, սակայն շատ առումներով դա կարող է բացատրվել ոչ միայն Վրաստանի քաղաքական և ռազմական ղեկավարության սխալներով, այլև այն հանգամանքով, որ պատերազմը սկսվեց այն ժամանակ, երբ Վրաստանի պահեստագործը՝ որպես անբաժանելի համակարգ, դեռ գտնվում էր զարգացման փուլում: Այնպես որ, միայն որոշ տարրերի (թեթև և հրաձգային զենքի նախնական ուսուցմամբ մեծաքանակ կազմ) առկայությունը՝ առանց մյուս բոլոր տարրերի (հրամանատարական կազմ, ամրություններ և այլն), մարտական գործողություններում պահեստագործի արդյունավետ կիրառման ոչ մի հնարավորություն չէր տալու:

2008 թ. պատերազմում կրած պարտությունից հետո Վրաստանի ղեկավարները փոխեցին պահեստագործային համակարգի վերաբերյալ իրենց հայացքները: Բացի այդ, Վրաստանի ղեկավարները կենտրոնացան որակի և ոչ թե քանակի վրա: Օրենսդրական մակարդակով դա արտացոլվեց 2010 թ. օգոստոսին ընդունված մի նոր՝ «Ջինվորական պահեստագործում ծառայության մասին» օրենքում:

Համաձայն այդ օրենքի՝ պահեստագործը պետք է կազմված լիներ երկու տարբեր տարրերից՝ առաջին հերթին՝ զինավարժ և կանոնավոր զինված ուժերում ծառայած զինվորներից և Ազգային գվարդիայի մասը կազմող՝ ցամաքային և քաղաքացիական պաշտպանության ուժերից: Վերջինն օժտված էր ահաբեկչության դեմ պայքարի, աղետների հետևանքների վերացման գործում զինված ուժերին օժանդակելու առաքելություններով: Չնայած դրան՝ քաղաքական ղեկավարության 2012 թ. փոփոխության հետ միասին փոխվեց նաև զինված ուժերի պահեստագործի բաղադրիչին վերաբերող տեսակետը:

Ըստ պահեստագործի նոր հայեցակարգի՝ Ազգային գվարդիան, որի մեջ 2 պահեստային բրիգադ է մտնում (10-րդը՝ Սենակիում և 20-րդը՝ Թելավիում) պատասխանատու էր նրանց ուսումնական վարժանքի և կազմակերպման համար: Պահեստագործը բաժանված էր (ցամաքային ուժերի պահեստագործ) զինվորական անձնական կազմի և կանոնավոր բանակի զորամասերի և տեղակայված նոր զորամասերի ուժեղացման համար նախատեսված պարտադիր մասից և տարածքային պաշտպանության առաջադրանք կատարող՝ կամավոր ազգային գվարդիայից:

Ցամաքային ուժերի պահեստագործն ուժեղացվում է Վրաստանի 27-ից 40 տարեկան քաղաքացիներով՝ ըստ հետևյալ կատեգորիաների.

- «Ա» – անձինք, ովքեր 5 տարի ծառայելուց հետո անցել են պահեստային ծառայության, նախկին զինծառայողները, ովքեր ամերիկյան ծրագրերի շրջանակում մասնակցել

են ուսումնական վարժանքներին, Աֆղանստանում, Իրաքում և Հարավսլավիայում գործողություններին մասնակցածները: Պահեստագործի այդ կատեգորիան նախատեսված է կանոնավոր զորամասերի համալրման համար:

- «Բ» – քաղաքացիական ուսումնական հաստատություններում զինպատրաստություն անցած պահեստագործայիններ:
- «Գ» – պետական բյուջեի հաշվին կրթություն ստացած և չծառայած պահեստագործայիններ:
- «Դ» – չծառայած, սակայն զինվորական հաշվառման մեջ գտնվող և զինվորական մասնագիտություն ունեցող անձինք:

«Ա» կատեգորիայի պահեստագործայինները կանչվում են տարեկան 16-օրյա հավաքների հենց այն զորամասերում, որոնց միանալու են պատերազմի դեպքում: Ելնելով նրանց արդեն ավելի բարձր նախնական զինպատրաստության մակարդակից՝ վերոհիշյալ ժամկետը բավարար է նրանց համար: Այդ կատեգորիայի պահեստագործայիններն իրավունք ունեն վերադառնալու կանոնավոր պայմանագրային ծառայության:

Մնացած կատեգորիաները պահեստագործի 4-ամյա պայմանագիր են կնքում: Այդ 4 տարիների ընթացքում նրանք պետք է մասնակցեն 180 օր ընդհանուր տևողությամբ վարժանքներին՝ 10-րդ կամ 20-րդ բրիգադներում.

- 1-ին տարի՝ անհատական ընդհանուր զինպատրաստություն (45 օր),
- 2-րդ տարի՝ անհատական հատուկ զինպատրաստություն (45 օր),
- 3-րդ տարի՝ խմբային զինպատրաստություն ջոկերում, խմբերում կամ անձնակազմում (40 օր),
- 4-րդ տարի՝ խմբային զինպատրաստություն «դասակ – վաշտ» մակարդակով:

Բացի այդ, պահեստագործի մարտունակության մակարդակը ստուգելու համար կազմակերպվում են նաև ամենամյա 5-օրյա հավաքներ: Ուսումնական հավաքների ժամանակ պահեստագործայինը դրամական նպաստ է ստանում (2013 թ. դրությամբ այն կազմում էր 400 ԱՄՆ դոլարին համարժեք): Բացի այդ, նրանք և նրանց ընտանիքների անդամները զինծառայողների սոցիալական ապահովության նպաստներ են ստանում, այդ թվում՝ իրավաբանական աջակցության և բուժօգնության համար: Պայմանագրի ավարտից հետո՝ պետական ծառայության անցնելիս, պահեստագործայինը որոշակի արտոնություններ է ստանում:

Կամավոր պահեստագործի կազմը համալրվում է 27 տարեկանը լրացած, պիտանի, զինված ուժերում չծառայած, զինվորական մասնագիտություն չունեցող և պահեստագործի 2004-2008 թթ. վարժանքներին չմասնակցած քաղաքացիներով, և «Ա» ու «Դ» կատեգորիաների՝ 40 տարեկանը լրացած անձանցով:

Կամավոր պահեստագործում ծառայել ցանկացող անձինք պետք է պայմանագիր կնքեն առնվազն 4 տարի ժամկետով: Այդ ընթացքում նրանք մասնակցում են 90-օրյա ուսումնական հավաքներին, ընդ որում՝ առաջին տարում՝ հիմնական զինպատրաստություն (45 օր), երկրորդ տարում՝ բուժպատրաստություն (15 օր), երրորդ տարում՝ կրակային պատրաստություն (15 օր), չորրորդ տարում՝ ինժեներատեխնիկական ուսուցում (15 օր):

Կամավոր պահեստագործը բուժօգնության նպաստներ և պետական ծառայության անցնելու առաջնահերթության իրավունք է ստանում, իսկ հավաքների ժամանակ կամ

պաշտոնական պարտականությունները կատարելիս դրամական նպաստներ է ստանում (170 ԱՄՆ դոլար): Ուսումնական հավաքներից հրաժարվելու դեպքում 2000 ԱՄՆ դոլարի տուգանք է սահմանվում:

Այսպիսով՝ 2008-ի պատերազմում պարտությունից և պահեստագործի հայեցակարգը վերաիմաստավորելուց հետո Վրաստանի ղեկավարությունը հրաժարվեց մեծաքանակ, վատ պատրաստված զուսպարտականներից և կենտրոնացավ անձնակազմի որակի վրա: Դա, առաջին հերթին, տեսանելի է թե՛ լավ պատրաստված, օրինակ՝ նախկին զինծառայողներից կազմված կադրերից, թե՛ նախկինում չծառայած անձանց ավելի երկարատև և ամբողջական ուսուցումից: Պահեստագործը խրախուսվում է և արտոնություններով, և դրամական նպաստներով: Դա վերաբերում է թեպարտադիր, թե՛ կամավոր պահեստագործին: Այդ մոտեցումը խիստ տարբերվում է մինչպատերազմյան զանգվածային՝ էժան՝ 18-օրյա պահեստագործի տարբերակից:

Ուկրաինա. պահեստագործային համակարգի իմպրովիզացիայի ենթարկման գործնական փորձը

Ուկրաինյան մեր ուսումնասիրության երկրորդ առարկան է, որի պահեստագործային համակարգը փորձարկվել է իրական մարտերում: 2014 թվականին պատերազմի սկզբում Ուկրաինայի պահեստագործային համակարգը շատ նման էր խորհրդայինին: Կախված առողջական վիճակից, զինված ուժերում և այլ համազգեստավոր ծառայություններում ունեցած փորձից՝ զինապարտ տղամարդիկ բաժանվում էին տարբեր խմբերի: Զինավարժ պահեստագործայինների թվաքանակը թղթի վրա բավականին մեծ էր երևում: Սակայն երբ զորահավաքի ժամանակ գործը հասավ նման «թղթային անձանց» ծառայությանը, զգալի դժվարություններ առաջացան: Այնուամենայնիվ, մինչև 2016 թ. ամառը Ուկրաինյան մասնակի զորահավաքի 6 ալիք իրականացրեց:

Զորահավաքի ենթարկված անձինք օգտագործվում էին զինված ուժերի կանոնավոր զորամասերի և պետական սահմանապահ ծառայության ուժեղացման համար: Այդ գործընթացի մասշտաբների մասին կարելի է դատողություններ անել մեկ տարվա ընթացքում 550-ից մինչև 5 հազար զինծառայողի հասած մեխանիզացված բրիգադներից մեկի օրինակով:

Զորահավաքի ալիքները, Ուկրաինայի զինված ուժերում շատ այլ միջոցառումների նման, հիմնականում իմպրովիզացիա էին և, ակնհայտորեն, ազդում էին դրանց որակի վրա: Ծառայած զինապարտների անբավարար քանակի հետ կապված դժվարությունները հանգեցրին նրան, որ զորահավաքի ենթարկվեցին նույնիսկ այն չծառայածները, ովքեր անգամ հիմնական զինապարտաստություն չէին անցել: Բացի այդ, շատ հաճախ զորահավաքի էին ենթարկվում ծառայությանը ոչ պիտանի անձինք: Այնուամենայնիվ, նույնիսկ նման անբարենպաստ պայմաններում Ուկրաինային հաջողվեց զորահավաք կազմակերպել ու համալրել բանակը և կայունացնել իրավիճակը ճակատում:

Բացի առկա կանոնավոր զորամասերի ուժեղացումից՝ 2014 թ. գարնանը Ուկրաինյան ձեռնամուխ եղավ տարածքային պաշտպանության զուսպարտականների ձևով կազմակերպված պահեստագործի ստեղծմանը: Ըստ նախնական պլանի՝ տեղական կարևոր օբյեկտները

պաշտպանելու համար յուրաքանչյուր շրջան պետք է մեկ գումարտակ ստեղծեր: Այնպես որ, այդ գումարտակները ոչ միայն ստեղծվեցին, այլ նաև կիրառվեցին տարածքային սկզբունքով: Սակայն ճակատում իրավիճակի սրումը ստիպեց, որ այդ գումարտակներն ուժեղացվեն և ուղարկվեն Դոնբաս, որտեղ նրանք հիմնականում պաշտպանում էին կանոնավոր զորամասերի թիկունքը, և հետագայում նրանք զբաղեցրին ճակատում իրենց հատկացված հատվածը: Բացի այդ, մի քանի շրջաններ ստեղծեցին իրենց երկրորդ կամ նույնիսկ երրորդ գումարտակները:

Այնուհետև, տարածքային պաշտպանության գումարտակներն ընդգրկվեցին Ուկրաինայի զինված ուժերի մեխանիզացված հետևակային գումարտակի շարքում: Նրանցից ոմանք՝ որպես նոր մեխանիզացված հետևակային բրիգադի մի մասը, բաշխվեցին 3-ական հոգուց բաղկացած խմբերում, իսկ մնացածները օժանդակ առաջադրանքների (թիկունքի պաշտպանության, ճակատի որոշ հատվածների պաշտպանության և այլնի) կատարման նպատակով միացան կանոնավոր մեխանիզացված, տանկային և հրետանային բրիգադներին:

Նման միավորումը կարելի է միանգամայն ողջամիտ համարել: Այն թույլ տվեց մեծացնել Ուկրաինայի զինված ուժերի բրիգադների քանակը: Տանկային, հրետանային և այլ կանոնավոր զորամասերի հաշվին այդ բրիգադները կարող էին ավելի լայն առաջադրանքներ կատարել, քան գումարտակների խմբերը՝ նախկինում: Նոր բրիգադները հնարավորություն ընձեռեցին ճակատում վերաբաշխելու պարտականությունները և հին կանոնավոր բրիգադներին մարտունակ դարձնելու թիկունքի կրակակետերում:

Ավելին՝ մինչ մեխանիզացված հրաձգային բրիգադների ստեղծումը մեխանիզացված և տանկային բրիգադների հրամանատարները, ի թիվս կանոնավոր զորամասերի, պատասխանատու էին նաև մի քանի (մինչև 4) տարածքային գումարտակների համար, որը դժվարացնում էր դրանց ղեկավարումը: Միևնույն ժամանակ, կանոնավոր բրիգադի մաս կազմող մեկ մեխանիզացված (նախկին տարածքային) գումարտակը թույլ էր տալիս օժանդակ առաջադրանքներ կատարել և բեռնաթափել կանոնավոր մեխանիզացված գումարտակները:

Տարածքային պաշտպանության գումարտակները բազմաթիվ թերություններ ունեին: Նրանք ստեղծվել էին հապտապ՝ տարբեր կատեգորիաների քաղաքացիներից: Գումարտակների մի մասը կազմավորվել էր զորահավաքի ենթարկված, հաճախ առանց կամ առնվազն որևէ ռազմական ուսուցմամբ անձանցից: Ժամանակի խիստ սղության պատճառով նախապատրաստման պայմանները վատթարացել էին: Ուժեղացնելուց հետո գումարտակներն անմիջապես ուղարկվում էին Դոնբաս, Ռուսաստանի, Մոլդովայի կամ օկուպացված Դրինի սահմանները: Միևնույն ժամանակ, գումարտակները հաճախ իրենց ուժերը ցրում էին տարբեր տարածքներում, որը ուսումնական վարժանքների համար լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում: Այդ ցրվածությունը նաև մեծացնում էր հատկապես ակտիվի հետ կապված զինվորական կարգապահության խնդիրները, որը տարածքային պաշտպանության գումարտակների համար մեծ մարտահրավեր էր դարձել:

Կամավոր տարածքային գումարտակների վիճակը շատ ավելի լավ էր թվում: Նրանց մոտիվացիան ավելի բարձր էր, որը դրականորեն էր ազդում նրանց մարտունակության վրա: Միևնույն ժամանակ, կամավոր զորամասերը անարխիստական հատկանիշներ էին դրսևորում: Բացի այդ, որոշ քաղաքական կուսակցությունների կողմից հովանավորվող որոշ տարածքային գումարտակներ սերտորեն հարում էին իրենց քաղաքական առաջնորդներին: Տարածքային պաշտպանության գումարտակները կանոնավոր մեխանիզացված հետևակային

գումարտակներին միացնելու ժամանակ վերը բերված բոլոր գործոնները հանգեցրին համատարած գտումների՝ հատկապես հրամանատարների շրջանում:

Ընդհանուր հաշվարկով, չնայած իրենց թերություններին, տարածքային գումարտակները, զինված ուժերին թույլ տալով կրկնապատկել հետևակային գումարտակների քանակը, իրենց դերն ունեցան ճակատում իրավիճակի կայունացման գործում: Տարածքային գումարտակների ստեղծման և ուսուցման ժամանակ առկա խնդիրները հիմնականում ծագել էին արտակարգ իրավիճակի հետևանքով: Տարածքային գումարտակները ցույց տվեցին, որ հնարավոր էր ամենակարճ ժամկետներում կազմակերպված պահեստագոր ստեղծել, սակայն ավելի լավ արդյունքի հասնելու համար լավ կլիներ դա նախօրոք անել:

Չնայած որ տարածքային պաշտպանության գումարտակների ստեղծումը իմպրովիզացված բնույթ էր կրում, չի կարելի ասել, որ պատերազմից առաջ Ուկրաինայում ոչ ոք նոր տիպի պահեստագործի մասին չէր մտածել: Պահեստագործի ծառայությունն ուժի մեջ մտավ 2006 թ-ին: Այն բնութագրվեց պրոֆեսիոնալ կադրերի համալրման (3-5 տարի) մոտեցմամբ, որտեղ պահեստագործային ու համապատասխան զորամասի հրամանատարի միջև պայմանագիր էր կնքվում: Պահեստագործում ծառայության համար զինվորներին տարեկան վճարվում էր 200 ԱՄՆ դոլար, իսկ բարձրաստիճան սպաներին՝ մինչև 400 ԱՄՆ դոլար: Վճարման պայմանները կախված էին զորամասի հրամանատարի կողմից պահեստագործային ծառայությանը տրված գնահատականից: Մի կողմից, դա թույլ էր տալիս պահեստագործայինին տարբերակված ձևով վճարել՝ կախված տվյալ զորամասի կարողությունների հզորացման մեջ վերջինիս բերած կոնկրետ ավանդից, սակայն մյուս կողմից էլ դա խրախուսում էր կոռուպցիան:

Ենթադրվում էր, որ պահեստագործայինը պետք է ծառայի տարին 35 օր՝ ամսական 2 օր, և 5-6 օրանոց 2 հավաք: Իրենց հաշվառման վայրի զորամասերում պահեստագործայինների ուսումնական վարժանքն իրականում պետք է կանոնավոր ծառայության դեպքում հեշտացներ նրանց ինտեգրումը:

Սակայն 2014-ի պատերազմից 8 տարի առաջ ուկրաինական պահեստագործային համակարգը փորձնական փուլից հեռու չէր գնացել: Այսպիսով՝ պահեստագործում ծառայության կանչված քաղաքացիների թվաքանակը չնչին էր: Պահեստագործի կադրերի համալրման նման մոտեցումն ի հայտ եկավ Ուկրաինայի տարածքային պաշտպանության շրջանակներում:

Ռուսաստանի հետ ծագած հակամարտությունից հետո Ուկրաինայի պահեստագործային համակարգը որոշ փոփոխությունների ենթարկվեց: 2015 թ. մարտից ի վեր նախկին պրոֆեսիոնալ զինվորները, առաջին անգամ զորացրված զինծառայողներն ու նախկին զինակոչի զինվորները խմբավորվեցին առաջին գծի օպերատիվ պահեստագործի մեջ: Օպերատիվ պահեստագործի անձնական կազմի հաշվառման վերցվեցին իրենց նախկին ծառայության զորամասերում:

Առաջին գծի օպերատիվ պահեստագործը ընդհանուր զորահավաքի դեպքում պարտավոր է զորահավաքի ենթարկվել փաստացի ծառայության համար կամ կարող է զորահավաքի ենթարկվել մասնակի զորահավաքի դեպքում: Առաջին գծի պահեստագործայինը պետք է իր զորամաս ներկայանա այդ մասին ծանուցումից մեկ օր անց: Համապատասխան զինվորական մասնագիտությունների տիրապետող հիշյալ պահեստագործայիններին օգտագործում էին զորամասերում տեղակայման համար մինչև պատերազմական իրավիճակը: Նրանց նաև նախատեսում էին զորամասերում կորուստների լրացման և լրացուցիչ, օրինակ՝ մեխանիզացված բրիգադների մաս կազմող՝ 4 մեխանիզացված գումարտակների տեղակայման համար:

Չնայած Ուկրաինայի օպերատիվ պահեստագործային համակարգը գործնականում չէր փորձարկվել, սակայն նրանց ծառայության զորամասերում զինվորական ծառայության հաշվառումը կարող է ուշագրավ համարվել, քանի որ այդ դեպքում պահեստագործայինը ներկայանում է իրեն արդեն ծանոթ զորամաս: Այդ պայմաններում կանոնավոր զորամասերում օպերատիվ պահեստագործի ինտեգրումը մասնակի կլինի:

Միևնույն ժամանակ, Ուկրաինայի զինված ուժերում կադրերի համալրման արտատարածքային սկզբունքի վերականգնումը հանգեցրեց ողջ երկրով մեկ պահեստագործի հաշվառմանը, որը բացասաբար է ազդում պահեստագործայինների՝ համապատասխան զորամասեր ներկայանալու ժամկետների վրա: Տեղակայման համար պահանջվող երկար ժամանակը շատ կարևոր չէ, սակայն հանկարծակի մարտական գործողությունների դեպքում ժամանակային գործոնը կարող է շատ կարևոր, նույնիսկ վճռական դառնալ:

Ջորահավաքի ենթարկված կամ առանց օպերատիվ վարժանքի զինակոչված զինվորներն օպերատիվ պահեստագործում հաշվառվելու փոխարեն՝ հաշվառվում են տարածքայինում և, ըստ զինկոմիսարիատների սպայի որոշման, կարող են օգտագործվել զորամասերի ուժեղացման համար:

Տարածքային պաշտպանության ուժերի ստեղծումը Ուկրաինայի կազմակերպված պահեստագործի և մեկ նոր տարրերից է: Դրանք շրջանային զինկոմիսարիատների պահպանության վաշտերը, շրջանային զինկոմիսարիատների պահպանության ջոկատները և հետևակային գումարտակներն են: Պաշտպանության իրավիճակի կամ ազգային արտակարգ դրության ժամանակ այս ուժերի անձնական կազմը կարող է կանոնավոր ծառայության զինակոչվել:

Այդ ուժերի կազմը համալրվում է համակցման սկզբունքով: Դրանց միջուկը կամավորներն են, իսկ մնացած տեղերը պետք է լրացվեն որոշակի խմբերում հաշվառված զինապարտներով: Տարածքային պաշտպանության անձնական կազմի հիմնական կատեգորիաները հետևյալն են.

1. Խաղաղ ժամանակ ընդհանուր ծառայությանը ոչ պիտանի (և պատերազմի ժամանակ՝ սահմանափակ պիտանիությամբ) անձինք կազմակերպչական խմբի առանցքային մասն են: Այդ կատեգորիան բարձր մոտիվացված է, սակայն առողջական վիճակի պատճառով զորահավաքով ակտիվ ծառայության կանչված չէ:
2. Քաղաքացիական ուսումնական հաստատությունների ռազմական ֆակուլտետների շրջանավարտ պահեստագործի սպաները հրամանատար սպայի կամ դրանից բարձր կոչումով հիմնական հրամանատարական կազմն են: Նրանցից շատերն ընդհանուր զինվորական ծառայության համար ոչ պիտանի են: Տարածքային պաշտպանության համակարգում սպաների ամենափոքր մասը կանոնավոր բանակի նախկին ավագ տարիքային խմբի սպաներն են:
3. Համապատասխան զինկոմիսարիատների հետ պայմանագիր կնքած պահեստագործայիններ:
4. Ժամկետային զինծառայություն անցած և առաջին գծի պահեստագործում չընդգրկված պահեստագործայիններ:
5. Ջորացրվածներ, որոնք ամենափոքր մասն են, քանի որ նրանք հաշվառված են միայն որպես առաջին գծի պահեստագործ:

Կազմակերպչական և սպառազինության առումով, հետևակային գումարտակներն առավել հզորն են: Ըստ էության, նրանք 2014-ի տարածքային պաշտպանության գումարտակների հետնորդներն են և նախատեսված են իրենց շրջանների պաշտպանության և պահպանության համար: Միևնույն ժամանակ, արտակարգ իրավիճակներում տարածքային գումարտակներին անհապաղ ռազմաձևակառուցված ուղարկելու փորձը թույլ է տալիս ենթադրել, որ իրավիճակի սրման դեպքում հետևակային գումարտակները կարող են նաև օգտագործվել իրենց մասնագիտացման շրջանակներից դուրս առաջադրանքների կատարման համար: Նույն փորձը բարդացնում է կամավոր պահեստագործայիններով հետևակային գումարտակի կադրերի համալրումը, քանի որ նրանք մտավախություն ունեն, որ տեսությունը կարող է տարբերվել պրակտիկայից: Այնուամենայնիվ, Ուկրաինայում հրաձգային գումարտակի անձնակազմի պատահական ընտրովի հավաքներ են կազմակերպվում: Դրանց ժամանակ իրականացվող ուսումնական վարժանքների հաճախականությունը, բազմազանությունը և ինտենսիվությունը հիմնականում կախված են զինկոմիսարիատի պատասխանատու սպաների անհատական որակական հատկանիշներից և հենց կամավորներից:

Ուկրաինայի տարածքային պաշտպանության նոր համակարգի երկրորդ ուժը յուրաքանչյուր տեղամասում, քաղաքում և շրջանային զինկոմիսարիատում տեղակայված պահպանության վաշտերն են: Դրանք հաշվառման են վերցված զինկոմիսարիատի սպաների կողմից և ուղղակիորեն օգտագործվում են զինկոմիսարիատների պաշտպանության և արտակարգ ռազմական դրության ռեժիմի և առաջնային զորահավաքի ապահովման համար: Միևնույն ժամանակ, պաշտպանական իրավիճակի դեպքում այդ վաշտերի անձնական կազմը փաստացի ծառայության է զորակոչվում, և դա է պատճառը, որ օրենքով նրանք չեն կարող օգտագործվել զինկոմիսարիատի սպաներին՝ նրանց կողմից զորակոչի պլանների իրականացման և մասնակի զորահավաքի ժամանակ օգնելու համար:

Ըստ պլանների՝ ենթադրվում է, որ Ուկրաինայի տարածքային պաշտպանության ուժերի առավել բազմաքանակ մասը տեղամասային զինկոմիսարիատների պաշտպանության ջոկատներն են: Այդպիսի ջոկատը իրականում վաշտի հրամանատարության հետ չկապված և առանց օժանդակ ստորաբաժանումների մի պաշտպանական գումարտակ է: Ջոկատի ֆունկցիան է պահպանել վարչական և կարևոր տնտեսական և ենթակառուցվածքային օբյեկտները և հաղորդակցության միջոցները, պարեկել իրենց պատասխանատվության տակ գտնվող տարածքները, ծառայել անցակետերում, պայքարել կողոպտիչների, անօրինական զինյալ և դիվերսիոն խմբերի դեմ:

Չնայած ֆունկցիաների լայն շրջանակին՝ այդ ջոկատները Ուկրաինայի տարածքային պաշտպանության ամենավատ կազմակերպված և հանդերձանքով թույլ հագեցված տարրն են: Նրանց զինվորները նույնիսկ համազգեստ չունեն (ի տարբերություն պաշտպանության ուժերի) և դրա փոխարեն կապույտ թևակապ են կրում:

Միևնույն ժամանակ, այդ ջոկատների անձնական կազմը (նրանց կազմակերպական կամավորական միջուկը) իրականում հրաձգային գումարտակների և պաշտպանության վաշտերի աղբյուրն է: Նրա մի մասը պայմանագրային ծառայության է անցնում կանոնավոր զինված ուժերի և ազգային գվարդիայի զորամասերում:

Ինչ վերաբերում է հենց կազմակերպական միջուկին (զորամասի սպաներ ու հրամանատարներ), ապա նրանց հետ պահեստագործի պայմանագիր կնքելը ներկայիս կարևոր խնդիրն է: Այնպես որ, փորձ է արվում նոր իրականության մեջ կյանքի կոչել 2006 թ-ի կանոնակարգերը: Միևնույն ժամանակ, որոշ դժվարություններ են առաջանում:

Նախ՝ պահեստագործում պայմանագրային ծառայությունը կանոնավոր զինծառայությանը պիտանի անձանց համար է, սակայն տարածքային պաշտպանության զինվորների, այդ թվում՝ բարձրաստիճան սպաների մեծ մասը ծառայության սահմանափակումներ ունի:

Երկրորդ՝ հին համակարգով նախատեսվում էր պայմանագիրը կնքել ուղղակիորեն զորամասի հրամանատարի հետ: Սակայն տարածքային պաշտպանության խմբերը (հետևակային գումարտակները, անվտանգության ջոկատները և պաշտպանության ուժերը) զորամասեր են դառնում միայն զորահավաքային տեղակայման ժամանակ, և միայն դրանից հետո են նրանց հրամանատարները համապատասխան իրավունքներ ձեռք բերել: Ավելին՝ տեղամասային զինկոմիսարիատները՝ իրենց էսկադրոններով և ջոկատներով, ո՛չ իրավական, ո՛չ էլ ֆինանսական առումով իրավաբանական անձինք չեն. միայն շրջանային զինկոմիսարիատներն են այդպիսիք հանդիսանում: Այնպես որ, այդ գործընթացը դեռ օրենքով կանոնակարգված չէ: Այնուամենայնիվ, պաշտպանության ուժերում և անվտանգության ջոկատներում ծառայության մոտ 2 հազար պայմանագիր է կնքվել:

Ինչ վերաբերում է պահեստագործայինների դրամական հատուցմանը, ապա 2014 թ-ից ի վեր կանոնավոր ծառայության զինվորի համար այն կազմում է տարեկան 100 ԱՄՆ դոլար: 2006 թ-ի համեմատ հատուցման գումարի նվազումը բացատրվում է ուկրաինական ազգային արժույթի 5 անգամ էժանացմամբ՝ առանց որևէ ողջամիտ ինդեքսավորման:

Ուկրաինայի տարածքային պաշտպանության ստեղծման հիմնական խնդիրը, մեր կողմից ուսումնասիրվող այլ երկրների նմանատիպ ուժերի համեմատ, նրանց ուսումնական վարժանքների ցածր ինտենսիվությունն է:

Եթե համեմատենք կազմակերպված պահեստագործի ստեղծման Ուկրաինայի և Վրաստանի փորձը, ապա առաջին հայացքից իրավիճակն իսկապես տարօրինակ է թվում: Նախքան 2008 թ-ի պատերազմը Վրաստանի ղեկավարությունը ուշադրություն էր դարձնում բանակաշինության այդ ոլորտի վրա, սակայն վրացական պահեստագործ մարտական գործողությունների ընթացքի և արդյունքի վրա որևէ իրական ազդեցություն չունեցավ: Պատերազմից առաջ ուկրաինական կազմակերպված պահեստագործ ղեկավարների հոգատարությունից դուրս էր, սակայն նույնիսկ մշտական իմպրովիզացիայի պայմաններում նրանք կարողացան տարածքային պաշտպանության բազմաթիվ գումարտակներ ստեղծել, որոնք ռազմաձևակառույցի իրավիճակի կայունացման գործում իրենց դերն ունեցան և, այնուհետև, միացան կանոնավոր բանակին: Այդ իրավիճակում, իհարկե, ամենակարևոր գործոնը ժամանակն էր: 2008-ի օգոստոսյան կարճատև մարտական գործողությունները Վրաստանին թույլ չտվեցին պահեստագործ կազմակերպել և այն արդյունավետ օգտագործել՝ չնայած Ուկրաինայի համեմատ ունեցած ավելի բարենպաստ մեկնարկային պայմաններին: Ռազմական հակամարտության աստիճանական սրումը Ուկրաինային թույլ տվեց ստեղծել և զարգացնել իր պահեստագործային ուժերը, այդ թվում՝ նրանց, ովքեր իրական մարտական փորձ ունեին:

Պետք է ընդունենք, որ չնայած բարդ տնտեսական իրավիճակին և միջոցների սղությանը՝ ինչպես Վրաստանը, այնպես էլ Ուկրաինան որոշել են, որ շատ կարևոր է նյութապես խրախուսել կամավորական պահեստագործին: Մինչ Վրաստանում դա վերաբերում է բոլոր պահեստագործայիններին, Ուկրաինան կենտրոնանում է հրամանատարների, այսինքն՝ տարածքային պաշտպանության կազմակերպչական միջուկի վրա:

3. ՆԱՏՕ-ի անդամ երկրների պահեստազորի մոդելները: Տարբեր մոտեցումներ

Պայմանագրային հիմունքներով համալրված
պահեստազորային համակարգ.
բրիտանական փորձը

Մեծ Բրիտանիան՝ 19-20-րդ դարերի մեծ զերտերություններից մեկը, փորձել էր պահպանել զինված ուժերի համալրման կամավորականության սկզբունքն այն ժամանակ, երբ նրա հիմնական դաշնակիցներն ու թշնամիներն անցել էին ընդհանուր զորակոչի համակարգին: 1899-1902 թթ. Բուրական պատերազմն ակնհայտորեն ցույց տվեց բրիտանական զորքերի տեղակայման ցածր կարողությունները, երբ կայսրությունը ստիպված էր մեծաքանակ զորք կիրառել ընդամենը երկու փոքր աֆրիկյան հանրապետությունները նվաճելու համար, որոնց բանակը կազմված էր աշխարհագրից:

Բրիտանական պրոֆեսիոնալ բանակի, ինչպես նաև ցանկացած այլ պրոֆեսիոնալ բանակի համար հիմնական դժվարությունը զինված ուժերի զորահավաքային տեղակայման համար անհրաժեշտ զինավարժ անձանց համակենտրոնացումն է: Զերտերությունների միջև 20-րդ դարի սկզբի հակամարտությունների սրմանը զուգահեռ, պահեստազորի անհրաժեշտությունը սկսեց ավելի արդիական դառնալ: Դրա արդյունքում 1907 թ. ընդունվեց «Տարածքային և պահեստային զինված ուժերի մասին» օրենքը: Ըստ այդ օրենքի՝ պետք է 14 տարածքային հետևակային դիվիզիա և 14 հեծելազորային բրիգադ ստեղծվեին: Համեմատության համար նշենք, որ մեծ քաղաքներում/մետրոպոլիսներում բրիտանական կանոնավոր զինված ուժերը բաշխված էին ըստ արշավախմբային ուժերի, որոնք կազմված էին 6 հրաձգային և 1 հեծելազորային դիվիզիաներից: Տարածքային գումարտակները խաղաղ ժամանակ մտնում էին կանոնավոր գնդերի կազմի մեջ: Օրինակ՝ Ռոյալ Սկոտներն ունեին 2 կանոնավոր գումարտակ, 1 պահեստազորի գումարտակ և 7 տարածքային գումարտակ:

1914 թ. դրությամբ, ընդհանուր առմամբ 450 հազար տարբեր տեսակի պահեստազորային կար՝ 250 հազարանոց մշտական զինծառայողների համեմատ: Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո նոր զորամասերում տեղակայման և կորուստները լրացնելու համար Բրիտանիայի զինավարժ ռեսուրսները շատ արագ սպառվեցին: Կամավորների հավաքագրման արդյունավետությունը բարելավելու նպատակով այսպես կոչված՝ ընկերական գումարտակներ (*Pals Battalions*) ստեղծվեցին: Դրանք ձևավորվում էին նույն բնակավայրի (կամ բնակավայրերի խմբի) բնակիչներից կամ նույն աշխատանքային վայրի աշխատողներից: Կամավոր հավաքագրման պաշարը 1916 թ-ին սպառվեց և, հետևաբար, մտցվեց պարտադիր համընդհանուր զինապարտություն:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Բրիտանիան վերադարձավ իր զինված ուժերում պայմանագրային ծառայության համակարգի կիրառմանը: Սակայն զինակոչը վերականգնվեց 1939 թ-ին և մնաց մինչև 1960 թ.: Դրանից հետո Բրիտանիան նորից անցավ կամավոր ծառայության սկզբունքին: Այսպիսով՝ լայնամասշտաբ ռազմական գործողությունների միջավայրում բրիտանական պայմանագրային բանակը՝ կազմակերպված պահեստազորի հետ միասին, չկարողացավ ապահովել զինված ուժերի անհրաժեշտ հզորությունը:

Սառը պատերազմի ավարտից հետո բրիտանական պահեստազորային համակարգը մի քիչ փոխվեց «Պահեստային ուժերի մասին» 1996 թ. օրենքի համաձայն: Ըստ այդ օրենքի՝ բրիտանական բանակի պահեստազորը կազմված էր հետևյալ տեսակներից՝ կամավորական, կանոնավոր և պայմանագրային:

Կամավորական պահեստազոր: Տարածքային բանակը (այժմ վերանվանվել է՝ բանակի պահեստազոր) կազմակերպված պահեստազորի տեսակ է: Կամավորական պահեստազորը կազմված է ցամաքային զորքերի՝ ինչպես մարտական, այնպես էլ օժանդակ զորամասերից: Խաղաղ ժամանակ դրանք ունեն մշտական անձնական կազմ՝ ուսումնական վարժանքների և վարչական գործառնությունների կազմակերպումն ապահովելու համար, ինչպես նաև պահեստազորից բաղկացած ոչ մշտական կազմ: Յուրաքանչյուր ուսումնական կենտրոն ունի 1-2 տարածքային զորամաս՝ դասակից մինչև գունդը (բրիտանական բանակում գունդը համապատասխանում է այլ բանակների խոշոր գումարտակին): Խաղաղ ժամանակ տարածքային բանակը համալրված է 5-10 % -ով:

Կամավորական պահեստազորն ունի հետևյալ ֆունկցիաները.

1. Բրիտանական բանակում զորահավաքային տեղակայման համար անձնական կազմի վարժանք և ուսումնական հավաքներ:
2. Վերապատրաստված կադրերով փնջավորված և կանոնավոր զորամասերի ուժեղացում:
3. Մարտական գործողությունների ընթացքում կրած կորուստների լրացում:
4. Արտակարգ իրավիճակներում քաղաքացիական կազմակերպությունների աջակցություն:
5. Բրիտանական զինված ուժերում ծառայության խթանում:

Բրիտանական պահեստազորում կամավորները հավաքագրվում են զինպատրաստության կենտրոնների հատուկ նշանակված սպաների կամ արտերկրներում գլխավոր խորհրդականների միջոցով: Նախքան պայմանագիր կնքելը պոտենցիալ պահեստազորայինը պետք է այդ մասին տեղեկացնի իր գործատուին և ստանա նրա գրավոր թույլտվությունը: Բացի այդ, նա պետք է ձեռք բերի գործատուի գրավոր թույլտվությունը հավաքների ժամանակահատվածի համար և այլ դեպքերում, երբ նա ստիպված է լինում լքել իր հիմնական աշխատատեղը:

Պահեստազորայինը զինծառայության պայմանագիր է կնքում կոնկրետ տեսակի պահեստազորի կոնկրետ պաշտոնում ծառայության համար և չի կարող տեղափոխվել առանց իր համաձայնության: Կամավոր պահեստազորայինի պայմանագրի ժամկետը զինվորների համար կարող է լինել 3, 6 կամ 9 տարի և 19-25 տարի՝ սպաների համար: Պահեստազորայինի

ցանկությամբ պայմանագիրը կարող է երկարացվել կամ դադարեցվել՝ ըստ այնտեղ սահմանված դրույթների:

Ամենամյա վարժանքները տևում են 50 օր և ոչ ավելի, քան իրար հաջորդող 21 օր: Ուսումնական վարժանքը կարող է իրականացվել ինչպես ուսումնական կենտրոններում, այնպես էլ Մեծ Բրիտանիայի տարածքում և արտերկրում տեղակայված կանոնավոր զինված ուժերի ռազմակայաններում: Հավաքներում պահեստազորայինի կողմից տրամադրված ժամանակի համար վճարը կատարվում է պաշտպանության նախարարության բյուջեից:

Կանոնավոր պահեստազորը նախատեսված է կանոնավոր բանակի զորամասերի և դիվիզիաների համալրման համար: Պահեստ զորացրված մինչև 45 տարեկան զինվորների և սպաների համար կանոնավոր պահեստազորում ծառայությունը պարտադիր է: Այն տևում է 5 տարի կամ այնքան ժամանակ, որն անհրաժեշտ է 22 տարվա ընդհանուր ծառայության ժամկետին հասնելու համար: Բրիտանական զինված ուժերում ավելի քան 12 տարի ծառայած անձինք ազատվում են կանոնավոր պահեստազորում ծառայությունից և կարող են կամավոր գրվել: Բացի այդ, ժամկետից շուտ ծառայությունը դադարեցրած զինծառայողները կարող են ծառայության անցնել պահեստազորում: Հաշվի առնելով կամավորական պահեստազորի համեմատ մասնագիտական բարձր մակարդակը՝ նրանց ամենամյա վերապատրաստումը տևում է 16 օր:

Պահեստազորի երրորդ տեսակը (պայմանագրային) ի հայտ է եկել ռազմական ոլորտում լայն տարածված արտապատվիրման արդյունքում: Որոշակի գործողությունների համար պայմանագրային հիմունքներով ներգրավված մասնավոր վաշտերն անհրաժեշտ են նաև պատերազմական գործառնությունների համար:

Խաղաղ ժամանակ պայմանագրային պահեստազորը չի մտնում կանոնավոր բանակի կազմի մեջ: Այն միայն կատարում է պաշտպանության նախարարության և մասնավոր վաշտերի միջև կնքված պայմանագրով սահմանված իր պարտականությունները՝ որպես քաղաքացիական աշխատող: Պատերազմի ժամանակ այդ աշխատակիցները ենթակա են զորահավաքի և շարունակում են իրենց պարտականությունների կատարումը որպես զինծառայողներ:

Բացի պահեստազորի՝ ըստ բովանդակության և նշանակության տարանջատումից՝ այն նաև բաժանվում է ըստ պահեստազորայինի արձագանքման աստիճանի կատեգորիաների: Կա արձագանքման բարձր պատրաստվածությամբ պահեստազոր, որը բաղկացած է ինչպես կամավոր, այնպես էլ կանոնավոր պահեստազորից:

Արձագանքման բարձր պատրաստվածությամբ պահեստազորն օգտագործվում է նախօրոք համաձայնեցված մասնագետներով կանոնավոր զորամասերը ուժեղացնելու համար: Սովորաբար դրանք թարգմանիչները, հանրության հետ կապերի սպաները, կապի մասնագետները, օդային և տիեզերական հետախուզական նյութերի գաղտնագերծողները, բժիշկները, ՄԺԲ պաշտպանության մասնագետներն են և ուրիշներ:

Արձագանքման ցածր պատրաստվածությամբ պահեստազորը նախատեսված է խմբեր կազմելու համար ժամանակ չպահանջող պահեստազորից բաղկացած՝ ինչպես առանձին զինծառայողների, այնպես էլ ամբողջ ստորաբաժանումների միջոցով կանոնավոր բանակն ավելի երկար ժամանակով ուժեղացնելու համար: Բացի այդ, նախատեսված է այդպիսի պահեստազորը ներգրավել արտակարգ իրավիճակներում քաղաքացիական

կազմակերպություններին աջակցելու գործում: Յուրաքանչյուր կոմսությունում կա արձագանքման ցածր պատրաստվածությամբ պահեստազորի 500 մարդուց կազմված կամավորական խումբ:

Ծառայության ընթացքում պահեստազորայինի աշխատատեղը պահպանվում է: «Պահեստային ուժերի մասին» օրենքի պահանջները խախտող գործատուները ենթակա են տուգանքի և նույնիսկ քրեական պատասխանատվության:

Պետության սահմաններից դուրս գործողություններին պահեստազորայինների մասնակցությունը կարգավորվում է պաշտպանության նախարարի կողմից արձակված հրամաններով: Նրանք կարող են մարտական գործողությունների ուղարկվել միայն իրենց ազատ կամքով: Եթե այդպիսիք կան, ապա նրանց փաստացի ծառայությունը տևում է 7 ամիս, որից 1 ամիսը՝ Մեծ Բրիտանիայի տարածքում վարժանքի համար, և 6 ամիսը՝ մարտական գործողությունների գոտում:

Բրիտանական պահեստազորի նման համակարգը զինվորական ղեկավարության համար լիովին բավարար չէ: Կարող ենք ընդգծել 2009 թ-ի «Պահեստազորի ռազմավարական ակնարկ»-ում բերված հետևյալ հիմնական խնդիրները.

1. Պահեստազորի փոքր թվաքանակը (մոտ 30 հազար՝ տարածքային բանակում և 30 հազար՝ զինված ուժերի կանոնավոր պահեստազորում): Բացի այդ, ստեղծված կամավորական պահեստազորի փաստացի կանոնավոր կազմը համալրված էր մոտ 80 %-ով, քանի որ պահեստազորում ծառայելու ցանկությունը բրիտանացիների շրջանում նվազել էր:
2. Ջորահավաքի ժամանակ պահեստազորայինների և կանոնավոր բանակի զորամասերի միջև թույլ ինտեգրման բարելավման անհրաժեշտություն կար:
3. Պակասի/թերհագեցման կառավարում:
4. Պահեստազորը հագեցված էր հնացած հանդերձանքով/միջոցներով:

Սա հանգեցրեց բրիտանական պահեստազորային համակարգի բարեփոխման մի նոր փուլի: Այն ամփոփվեց «Պահեստազորի դերն ապագա զինված ուժերում-2020» ներկայումս իրականացվող ծրագրում: Դրա հիմնական առաջադրանքներն են.

1. Կադրերի համալրման և զինպատրաստության համապատասխան մոդելների իրականացում:
2. Ջինված ուժերի փոխգործունեության նոր մեխանիզմներին համապատասխան օպերատիվ և մարտական պատրաստության միջոցառումներ Բրիտանիայում և արտերկրում:
3. Պահեստազորի առաջադրանքների օպտիմալացում:
4. Ջորամասերի վերակազմավորում և տեղակայում՝ ըստ ցամաքային զորքերի բարեփոխումների:
5. Պահեստազորի հագեցում ժամանակակից սարքավորումներով և զինամթերքով, ինչպես կանոնավոր բանակում:

Կանոնավոր բանակի հետ պահեստազորի ինտեգրման մակարդակն ավելի ակտիվացնելու համար պահեստազորայինների վարժանքն իրականացվում է նրանց ապագա տեղաբաշխման կանոնավոր զինված ուժերում: Ըստ բրիտանական

ղեկավարության նոր տեսակետի՝ մշտական պատրաստվածության ուժեր չհամարվող կանոնավոր ստորաբաժանումները պետք է խաղաղ ժամանակ մնան թերհամալրված և ամբողջությամբ համալրվեն այնտեղ հաշվառված պահեստազորով ուժեղացման միջոցով: Այդ նպատակով զինված ուժերի ստորաբաժանումներն իրենց մոտ հաշվառման են վերցնում «զույգ ընտրված գումարտակ» կոչվող համապատասխան պահեստազորը: Կանոնավոր բանակի զորամասերը, անհրաժեշտության դեպքում, կարող են ուժեղացվել առանձին պահեստազորայիններով կամ նույնիսկ պահեստազորի ամբողջ ստորաբաժանումներով: Ավելի նվազ կարևոր առաջադրանքների պայմաններում իրավիճակը շրջվում է, որի դեպքում հնարավոր է, որ պահեստազորային ուժերը մեծանան կանոնավոր բանակի «զույգ ընտրված» զորամասերի հաշվին:

«Զույգ ընտրված գումարտակների» հայեցակարգը՝ որպես պահեստազորի և կանոնավոր զինված ուժերի միջև սերտ ինտեգրման հետաքրքիր ձև, իհարկե, ուշադրության արժանի է: Դրա իրականացման համար զինված ուժերի կադրերի համալրումը կարևոր է: Համենայն դեպս, դա լավ է նախկին պրոֆեսիոնալներից, ժամկետային զինծառայողներից կամ զորահավաքի ենթարկված զինվորներից կազմված՝ կազմակերպված պահեստազորի համար:

Բրիտանական պահեստազորային համակարգի բարեփոխման ուղղություններից մեկն էլ պահեստազորի՝ որպես կանոնավոր ստորաբաժանման կողմից իրականացվող առաջադրանքների օպտիմալացումն էր: Նման միջոցառման նպատակն է կանոնավոր բանակի զինծառայողներին ազատել օժանդակ ֆունկցիաներից: Խոսքը ֆինանսական և նյութատեխնիկական աջակցության (վառելիքի, փոխադրման, գնումների), դաշտային հրետանու, հակաօդային պաշտպանության, ինժեներական աջակցության, դեղորայքի և ՏՏ-ի մասին է: Իհարկե, նշված գործառույթների համար ոչ բոլոր պաշտոններն են, որ կարող են պահեստազորայիններով փոխարինվել՝ առանց առաջադրանքների կատարման որակը վնասելու:

Պահեստազորի թվաքանակի ավելացման համար բրիտանական ղեկավարությունը, ի լրումն նյութական խրախուսման, նաև տարբեր սոցիալական արտոնություններ է առաջարկում: Օրինակ՝ զորահավաքի կանչված պահեստազորայինին վճարվում է այնքան, որքան կանոնավոր բանակի զինծառայողին: Եթե նրա քաղաքացիական աշխատավարձը ավելի բարձր է եղել, ապա նա իրավունք ունի դիմելու համազոր փոխհատուցման համար: Ավելին՝ նա փոխհատուցում է ստանում սոցիալական ապահովության վճարների, իր երեխաների կրթության վճարների և բնակարանի վարձակալման համար, եթե նրա նախորդ գործատուն հատուցում էր այդ ծախսերը: Միևնույն ժամանակ, պահեստազորայինի օրական վճարը չի կարող գերազանցել 548 ֆունտը (տարեկան մոտ 200 հազար):

Տարածքային պաշտպանության համակարգի ստեղծումը ՆԱՏՕ-ի անդամ մայրցամաքային երկրներում: Երկու տարբեր մոտեցումներ

Գերմանիա

Նույնիսկ ՆԱՏՕ-ի անդամ բավականին խոշոր պետություններն են հասկանում տարածքային պաշտպանության ուժերի կարևորությունը: Կանոնավոր բանակի օժանդակ խնդիրներին առնչվող բեռը նվազեցնելու՝ նման ուժերի ունակությունը հատկապես արժեքավոր է զինված ուժերի թվաքանակի կրճատման և այդ առաջադրանքները պայմանագրային կադրերին փոխանցելու պայմաններում: Այս գլխում կոդիտարկենք տարածքային պաշտպանության ուժերին վերաբերող՝ Գերմանիայի և Լեհաստանի ներկայիս մոտեցումները:

Ըստ Գերմանիայի պաշտպանության նախարարության հայեցակարգի՝ Բոնդեսվերում նախատեսվում են պահեստազորի երեք տեսակներ՝ զինվորական, տարածքային և ընդհանուր: Զինվորական պահեստազորը նախատեսված է կանոնավոր բանակի ստորաբաժանումները զինգրքույկներ ունեցող պահեստազորայիններով համալրելու համար: Ընդհանուր պահեստազորի շարքում են ռազմական մասնագիտություններ ունեցող բոլոր զինապարտները: Տարածքային պահեստազորը անձնական կազմի և տարածքային պաշտպանության բաղադրիչի աղբյուրն է համարվում:

Գերմանիայի տարածքային պաշտպանության ուժերը (Տարածքային պաշտպանության և աջակցության ուժեր) ստեղծվել են 2012-2013 թվականներին: Նրանք նախատեսված էին լրացուցիչ առաջադրանքներում փոխարինելու Բոնդեսվերի գորամասերին:

Տարածքային պաշտպանության ուժերը ենթարկվում են դաշնային երկրներին և 2007 թ-ին չեղարկված «Հայրենիքի պաշտպանության» գումարտակների իրավահաջորդներն են հանդիսանում: Այդ ստորաբաժանումների առաջադրանքները հետևյալն են.

1. Ռազմական օբյեկտների ենթակառուցվածքների պահպանություն (պաշտպանություն):
2. Հասարակական կարգի պահպանում և ներքին անվտանգություն:
3. Գերմանիայում ահաբեկչության դեմ պայքար:
4. Աղետների հետևանքների վերացման գործողություններ:
5. Մասնակցություն Գերմանիայում ձգնաժամային կառավարման գործողություններին:
6. Որոնողական և փրկարարական աշխատանքներ:
7. Աջակցություն պետական սահմանի պահպանությանը և պաշտպանությանը:
8. Մասնակցություն տարածքի օպերատիվ նախապատրաստման ինժեներատեխնիկական աջակցությանը:

Այսպիսով՝ մենք միանշանակորեն տեսնում ենք, որ գերմանական տարածքային պաշտպանության ուժերը պահպանական ֆունկցիաներ են կատարում:

Գերմանական տարածքային պաշտպանության ուժերի անձնական կազմը խաղաղ ժամանակ 3 հազար է, որը պաշտպանական իրավիճակում կարող է ավելանալ՝ հասնելով մինչև 10 հազարի:

Գերմանական տարածքային պաշտպանության ուժերը ստեղծվել են կամավորության հիման վրա՝ հիմնականում Բունդեսվերի նախկին զինծառայողների և քաղաքացիական մասնագետների մասնակցությամբ: Պահեստազորի ստորաբաժանումները ստեղծվել են կանոնավոր բանակի առկա զորամասերի հիման վրա, որոնք էլ աջակցում են նրանց զինպատրաստության և նյութատեխնիկական ապահովման գործում:

Տարածքային պահեստազորի անձնական կազմը բաժանվում է ըստ զինավարժ պահեստազորայինների և պահեստազորի թեկնածուների: 25-ից 45 տարեկան (կամ բացառիկ դեպքերում՝ 65 տարեկան) ցանկացած քաղաքացի կարող է թեկնածու դառնալ: Ներկայումս մրցույթն ընթանում է՝ 10 մարդ՝ մեկ տեղի համար:

Խաղաղ ժամանակ պահեստազորը կազմված է տարածքային հրամանատարության 30 վարչական կոմսություններում գտնվող տարածքային պաշտպանության վաշտերից: Յուրաքանչյուր դաշնային երկրում այդ վաշտերի քանակը տարբեր է և տատանվում է 1-ից մինչև 7-ը (Բավարիա): Տարածաշրջանային պաշտպանության և պահպանության վաշտերը կարող են կազմված լինել 3-4 պարեկային ջոկատից և 100-130 զինծառայողից:

Զինծառայողների զինպատրաստության և կրթության համար ֆինանսավորումը կատարվում է տարածաշրջանային բյուջեից, իսկ պահեստազորի սարքավորումների և հատուկ զինամթերքի ծախսերի կեսը հոգում են ՏԻՄ-երը:

Առաջին և հատուկ զինպատրաստությունն իրականացվում է բանակային այն զորամասի հիման վրա, որտեղ գրանցված է տվյալ *էսկադրոնը*: Կանոնավոր զորամասերն այդ նպատակի համար զենք են տրամադրում: Տարածքային պաշտպանության զորամասերի սարքավորումները և զենքը պահվում են կանոնավոր զորամասերում, իսկ համագեղացի տրվում է ուղղակի պահեստազորայինին՝ տանը պահելու համար: Ֆիզպատրաստությունն իրականացվում է պահեստազորի վաշտերի և դասակների հրամանատարների կողմից:

Տարածքային պաշտպանության վաշտերի ամենամյա ուսումնական վարժանքը տևում է 12 օր և իրականացվում է այն կանոնավոր զորամասի հիման վրա, որտեղ նրանք գրանցված են: Նշված ուսումնական վարժանքն ավարտելուց հետո թեկնածուն պահեստազորայինի կարգավիճակ է ձեռք բերում: Ուսումնական ծրագրի մեջ մտնում են կրակային, մարտավարական, ֆիզիկական և բժշկական պատրաստությունը, ՄԿՔ պաշտպանությունը, քաղաքային և լեռնային պայմաններում մարտական գործողությունների վարումը, փրկարարական/կյանքի փրկության ծառայությունները, անձի և տրանսպորտային միջոցների զննությունը: Ավելին՝ տարեկան հավաքների ընթացքում մասնագիտական վերապատրաստման դասընթացներ են անցկացվում դասակի և հաշվարկի հրամանատարների համար: Եռամսյակային ուսումնական վարժանքները (եռամսյակում առնվազն 5-ը) նվիրվում են տեսական պարապմունքներին: Բացի այդ, տարին առնավազն 2 անգամ դասակի տարաբաշխում է կատարվում, որտեղ զինվորները սովորում են, թե ինչպես համագործակցեն տեղական կառավարման մարմինների, ոստիկանության և փրկարար ծառայությունների հետ: Այդպիսի վարժանքները նախատեսված են բարձրացնելու տարածքային պաշտպանության *էսկադրոնների* քաղաքացիական և ոչ ռազմական բնույթի խնդիրների կատարման արդյունավետությունը:

Այսպիսով՝ Գերմանիայի տարածքային պաշտպանության ուժերը մեծաքանակ չեն: Դրանք պահպանական և քաղաքացիական բնույթի են, սակայն ստեղծվել են հիմնականում նախկին զինծառայողներից կազմված՝ որակյալ կադրերի հիման վրա:

Լեհաստան

Գերմանիան իր տարածքային պաշտպանության ուժերը դիտարկում է որպես միայն պահպանության համար նախատեսված զորամասեր, մինչդեռ Լեհաստանի համար այդ ուժերն առաջադրանքների լայն շրջանակ ունեն:

Լեհական տարածքային պաշտպանության հիմնական զորամասը կազմված էր բրիգադից և գումարտակից, որը բաղկացած էր թեթև հետևակային վաշտերից, հատուկ նշանակության վաշտից և առանձին դասակներից: Եթե լեհական թեթև հետևակային վաշտերը համեմատելու լինենք գերմանական տարածքային պաշտպանության վաշտի հետ, ապա Լեհաստանն ուներ չորս ջոկից բաղկացած (2 հակատանկային, 1 ականանետային և 1 գնդացրային) 4-րդ օժանդակ դասակը: Բացի այդ, լեհական տարածքային պաշտպանության յուրաքանչյուր հրաձգային դասակ ունի 4-րդ՝ օժանդակ ջոկը: Հետևաբար լեհական վաշտերի կարողություններն ավելի մեծ և ավելի բազմաֆունկցիոնալ են, քան գերմանականին: Դա հատկապես երևում է գումարտակի և բրիգադի մակարդակում: Բացի անձնական զենքից՝ լեհական գումարտակները պետք է զինված լինեն կառավարվող հակատանկային ականանետային համակարգերով, ինքնաձիգ ականանետներով, ականանետներով և գնդացիրներով:

Խաղաղ ժամանակ անձնական կազմը բաղկացած է 19 տարածքային պաշտպանության հրաձգային գումարտակներից՝ յուրաքանչյուր տարածաշրջանում 1-ական, և 3 կենտրոնական գումարտակներից՝ յուրաքանչյուրում 700 զինծառայող: Պատերազմի ժամանակ տարածքային պաշտպանության բրիգադը պետք է ունենա 3,5 հազար զինծառայող: Հետևակային ստորաբաժանումներից բացի՝ դրանց պետք է միանան նաև հակաօդային պաշտպանության, հրետանային և այլ ստորաբաժանումները:

Այսպիսով՝ տարածքային պաշտպանության համակարգի ստեղծման ժամանակ Լեհաստանը նախատեսում էր այնպիսի ուժեր ձեռք բերել, որոնք պետք է կարողանային օժանդակ խնդիրներ լուծել ոչ միայն թիկունքում, այլ նաև ճակատում և նույնիսկ թշնամու թիկունքում: Դա կարելի է տեսնել լեհական տարածքային պաշտպանության ուժերին պատվիրակված առաջադրանքների լայն շրջանակից.

9. Մասնակցել պահեստազորի զորահավաքներին, նրանց տեխնիկա և զենք տրամադրել:
10. Ապահովել մարդկանց և գույքի տարահանումը:
11. Կազմակերպել ամրացված տարածքի նախապատրաստում:
12. Ապահովել կանոնավոր զորամասերի թիկունքը:
13. Պաշտպանել կարևոր օբյեկտները:
14. Պայքարել դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ:
15. Պայքարել դեսանտային և օդային հարձակումների դեմ:

16. Պահպանել կապի միջոցները:
17. Իրականացնել տեղանքի պաշտպանություն, պայքարել թշնամու զրահատեխնիկայի դեմ:
18. Պահպանել կանոնավոր ստորաբաժանումների ֆլանգները:
19. Կազմակերպել պարտիզանական գործողություններ:
20. Թշնամու թիկունքում գործողությունների միջոցով օժանդակել կանոնավոր ուժերի հարձակմանը:
21. Մասնակցել թշնամու զինաթափմանը և հսկել ռազմագերիներին:

Բացի դրանից՝ ենթադրվում է, որ խաղաղ ժամանակ նրանք պետք է օգնեն քաղաքացիական իշխանությունների իրավապահ գործողություններին և աղետների հետևանքների վերացման աշխատանքներին:

Այսպիսով՝ Լեհաստանի տարածքային ուժերն առաջադրանքների ավելի լայն շրջանակ ունեն, քան գերմանական, ուկրաինական և վրացական ուժերը: Դրանք իրականացնելու համար Լեհաստանի տարածքային պաշտպանությունն ապավինում է համապատասխանորեն զինավարժ կադրերով համալրված ավելի հզոր ստորաբաժանումներին:

Լեհաստանի տարածքային պաշտպանության պահեստազորի ուսումնական վարժանքն իրականացվում է հետևյալ կերպ. շաբաթական մեկօրյա վարժանք՝ տեղակայման վայրում, ամսական 2-օրյա վարժանք՝ ուսումնական կենտրոններում, տարեկան 14-օրյա կամ 30-օրյա վարժանք՝ վերապատրաստման կենտրոնի զորադաշտում: Ընդհանուր առմամբ այն կազմում է տարեկան 90-ից մինչև 106 վարժանքի օր, որը շատ լավ է ոչ միայն տարածքային պաշտպանության ուժերի, այլ նաև կանոնավոր ստորաբաժանումների ուժեղացման համար կիրառվող պահեստազորայինների համար: Նման ինտենսիվությունը թույլ է տալիս ունենալ այնպիսի որակյալ կադրեր, որոնք ի վիճակի են ոչ միայն զբաղվելու պաշտպանությամբ, այլ նաև գործելու ռազմի դաշտում:

Տարածքային պաշտպանության նյութատեխնիկական ապահովումը ֆինանսավորելու պարտականությունները դրված են ինչպես պաշտպանության նախարարության, այնպես էլ տեղական բյուջեների վրա: Բացի դրանից՝ նախատեսվում է պահեստազորի կողմից անհրաժեշտ սարքավորումների/հանդերձանքի գնումներն ազատել հարկերից:

Այսպիսով՝ ՆԱՏՕ-ի անդամ մեծ երկրները տարածքային պաշտպանության նկատմամբ միանգամայն տարբեր՝ պահպանությունից մինչև ընդհանուր ռազմական մոտեցումներ են ցուցաբերում:

Եզրակացություն

Սույն ուսումնասիրության մեջ, մի շարք երկրների օրինակների հիման վրա, մենք վերլուծել ենք պահեստագործի կազմակերպման տարբեր ձևերը՝ հաշվի առնելով այդ երկրների զինված ուժերի տարբեր խնդիրները և նպատակները, տարբեր պոտենցիալ և իրական սպառնալիքները, ֆինանսական ռեսուրսները, կանոնավոր զինված ուժերի համալրման տեսակները:

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առավել արդյունավետ պահեստագործայինները միջին մակարդակի մարդկանցից ավելի բարձր մոտիվացված կամավորներն են, չնայած նրան, որ նրանց մոտիվացիան նույնիսկ քիչ թե շատ նյութապես է պայմանավորված: Ավելին՝ նյութական խրախուսման նվազ միջոցների դեպքում պահեստագործայինների հավաքագրումն ավելի հաճախակի է խնդիրների առաջ կանգնում: Անգամ այն դեպքերում, երբ պետությունն աջակցում է պահեստագործին և դրամական ու սոցիալական նպաստների պատշաճ փոխհատուցում է տրամադրում, կամավոր պահեստագործի թվաքանակը համեմատաբար փոքր է:

Այսպիսով, եթե հզոր թշնամուն դիմակայելու համար պետությանը (չեզոք եվրոպական պետությունները՝ Սառը պատերազմի ժամանակ, Վրաստանը և Ուկրաինան՝ ներկայումս) մեծաքանակ պահեստագործ է անհրաժեշտ, ապա նա չպետք է հույսը միայն կամավորների վրա դնի: Դա հատկապես ճիշտ է Ուկրաինայի դեպքում, որտեղ կամավոր պահեստագործայինների ներգրավման համար նյութական շահագրգռվածությունը շատ ցածր է: Նման պայմաններում բավարար պահեստագործը ստեղծվում է կանոնավոր բանակի նախկին զինվորականների՝ անկախ կադրերի տեսակից և նախկինում չծառայածների համար պարտադիր զինապարտություն մտցնելու միջոցով:

Վերջին կատեգորիայի համար պատշաճ զինպատրաստություն է պահանջվում: Առանց դրա, ի վնաս որակի՝ միայն քանակի վրա կենտրոնանալը գրոյական արդյունքի է հանգեցնում, ինչպես դա երևաց Վրաստանի մինչպատերազմյան 2008-ի պահեստագործից: Վրացական պահեստագործային համակարգի հետպատերազմյան բարեփոխումները պահեստագործի պատրաստման որակի վրա, նույնիսկ քանակի հաշվին, կենտրոնանալու վառ ապացույցն են:

Ուկրաինական փորձը հետաքրքիր է իր իմպրովիզացիայով, որը մասնավորապես կենսունակ է նման դեպքերում: Այդ վերջին հանգամանքը պայմանավորված է Ռուսաստանի հետ հակամարտությունից ձեռք բերված գործնական փորձով:

Պահեստագործայինի ամենաարժեքավոր հատկանիշը պետության համար՝ նրա էժանությունն է կանոնավոր բանակի զինվորի համեմատ, ով բավականին թանկ է, հատկապես երբ խոսքը վերաբերում է պրոֆեսիոնալներին: Դա է պատճառը, որ նույնիսկ Մեծ Բրիտանիայի նման բավականին հարուստ պետություններն իրենց պահեստագործը ստեղծում են ոչ միայն նախկին զինծառայողների, այլև նախկինում չծառայած անձանց ներգրավման միջոցով: Համեստ երկրների դեպքում արդյունավետ պահեստագործի առկայությունը հաճախ անհրաժեշտ հզորությամբ զինված ուժեր ունենալու միակ ճանապարհն է՝ առանց խաղաղ ժամանակ բանակի պահպանման անհիմն ծախսերի:

Շատ երկրների համար տարածքային պաշտպանության ստորաբաժանումները պահեստազորայինների փաստացի բնակության վայրում տարածաշրջանների պահպանության համար օգտագործվող պահեստազորի հատուկ մասն են: Տարածքային պաշտպանության ստորաբաժանումների նման կիրառումը թույլ է տալիս բեռնաթափել կանոնավոր բանակի զինված ուժերի թիկունքի առաջադրանքները: Առողջական և տարիքային սահմանափակումներ ունեցող զինծառայողները կարող են պահպանության առաջադրանքներ կատարել, որը դրական ազդեցություն ունի մարդկային ռեսուրսների օգտագործման արդյունավետության վրա:

Բացի պահպանության առաջադրանքներից՝ թշնամու կողմից տարածքի օկուպացման կամ այնտեղ տեղակայման դեպքում շատ երկրներ տարածքային պաշտպանության ուժերի վրա պարտիզանական առաջադրանքներ են դնում: Դրան նպաստում է այնտեղ բնակվող տարածքային պաշտպանության զինվորների՝ տեղանքին ծանոթ լինելը:

Ընդհանուր մարտական գործողությունների համար տարածքային պաշտպանության ուժերը ոչ համապատասխան զենք ունեն, ոչ էլ անձնական կազմի զինավարժություն, և նրանք հազիվ թե օգտագործվեն այդ նպատակով: Բացառություն է կազմում միայն տարածքային պաշտպանության լեհական մոտեցումը, որտեղ նրանց վրա ընդհանուր մարտական խնդիրներ են դրված, քանի որ տարածքային ստորաբաժանումները համալրված են ծանր հետևակով, բաշխված են ըստ տարածքային կազմակերպությունների խոշոր զորամասերի (բրիգադ) և երկարատև վարժանք են անցնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Defense Sector Development Principles in Neutral Countries: Lessons for Ukraine. Yuriy Barash, Olena Kuplevatska. *Strategic Priorities*, N4 (21), 2011.
2. «Neutral European Countries' Policies in Collective Security and Defense». Policy Brief. The National Institute for Strategic Studies
3. «Analysis of the Defense Approaches of Non-Aligned Countries (Sweden, Austria, Finland)». Policy Brief. The National Institute for Strategic Studies
4. Austria – Military Personnel. GlobalSecurity.org
5. Website of the Ministry of Defense of Austria. <http://www.bundesheer.at/>
6. Austrian Security Policy – New Tasks and Challenges. Gunther HAUSER. <http://www.as4u.cz/filemanager/files/file.php?file=6424>
7. Austrian Security and Defense Doctrine, 2001. <http://constitutions.ru/?p=5451>
8. Austrians vote to keep compulsory military service. BBC News
9. Switzerland Military Strength. www.GlobalFirepower.com
10. Շվեյցարիայի պաշտպանության նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.vtg.admin.ch/internet/vtg/de/home.html>
11. Business and Army Are One. Matthew Allen, SWI swissinfo.ch
12. Does the Mass Army Have a Future? Urs Geiser. SWI swissinfo.ch
13. Reservists as the Foundation of Many Countries' Armies. *The People's Army*.
14. The Swiss Model. *The People's Observer*.
15. Finnish Armed Forces: When Your Neighbor is Russia. *Viys'ko Ukrainy*. March 16, 2015.
16. Ֆինլանդիայի պաշտպանության նախարարության պաշտոնական կայք՝ <http://puolustusvoimat.fi/etusivu>
17. An Army of Professional Reservists. *The People's Army*. January 2016.
18. The History of Finland: Lines, Structures, Pivotal Moments. Henrik Meinander.
19. On the Reforms in the Finnish Armed Forces. *Foreign Military Review*. – 2014. – N2.
20. Mannerheim's Grandchildren. <http://tyzhden.ua/World/166000>
21. The Self-Defense Forces of Finland, the Birthplace of the Molotov Cocktail. http://aratta-ukraine.com/text_ua.php?id=3069
22. The Finnish Experience of Neutrality: What Should Ukraine Learn From It? Charly Salenius Pasternak, for *Europeys'ka pravda*. August 05, 2015.

23. New Reserve Training and Management Concept. – Ministry of Defense of Georgia. – 2007. – 30 p.
24. V. Tseluyko. “Staff for Comprehensive Defense”. http://nvo.ng.ru/wars/2007-09-28/2_kadry.html
25. A. Lavrov. “The Chronology of Combat Between Russia and Georgia in August 2008” // *The August Tanks* (Танки августа) – Moscow, 2009 – pp. 43-84
26. V. Tseluyko. “The Five-Day War” // *Armament Exports*, 2009. – N1 – pp. 65-74.
27. A. Yavorskiy. “The Reserve component of the Georgian Armed Forces” // *Foreign Military Review* – 2013. – N10 – pp. 27-31.
28. The White Book 2006: Ukraine’s Defense Policy. – The Ministry of Defense. – 2007. – pp. 44-45.
29. D. Alov. “Great Britain’s Land Forces Reserve and the Directions of Its Reform” // *Foreign Military Review* – 2013. – N8 – pp. 40-50.
30. Serving in the Reserve <http://www.mil.gov.ua/rezervist/>
31. Army Reserve <http://www.army.mod.uk/reserve/31781.aspx>
32. Future Reserves 2020 (FR20) <http://www.army.mod.uk/reserve/31795.aspx>
33. S. Korchagyn. “The Territorial Reserve in the German Armed Forces” // *Foreign Military Review* – 2015. – N5 – pp. 47-51.
34. S. Korchagyn. “The Concept of the Territorial Defense Troops in the Republic of Poland” // *Foreign Military Review* – 2013. – N4 – pp. 36-45.

Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բադրակ

Պահեստագորային համակարգի կիրառման փորձի հետազոտություն

Խմբագիր՝ Անահիտ Բրուտյան
Հայերեն թարգմանություն՝ Գրիգոր Իգիթյան
Սրբագրիչ՝ Անգելինա Հարությունյան
Համակարգչային դիզայն՝ Մարկ Կանարսկիյ, Օկսանա Կոչերգինա

Խմբաքանակ՝ 500 օրինակ
Հրատարակչություն՝ «Լուպատինա Օ.Օ.»
Tel. +38(044)5013670

Видавець і виготовлювач: ФОП Лопатіна О.О.
www.publishpro.com.ua
тел.: +38 044 501 36 70

ISBN 978-617-7533-06-0

